

15
/ 64



282

Πρncu

*

1067-64

30 79

ԱՏԵՆԱԽ ՕՍՈՒԹԻԿՆ

Ս. ԲԱՀԱՆԱՅԱԳԵՏԻ


Պ Ի Ռ Ա Ի Ի Ն Ա Կ Ի Ռ Ի Պ Ի

Ա Ս Ա Ց Ե Ա Լ

Ի ԺՈՂՈՎԻ ԿԱՐԴԻՆԱԼԱՅ Ի ԿԱՅԵԴԱ

ՅԱՄԻ 1849 Ի 20 ԱՊՐԻԼԻ


Handwritten signature



Մեծարգոյ եղբարք

ՍՏՈՒԳԻԻ ամէն մարդ զիտէ որ ինչպիսի ու սր-
 չափ չարեաց փոթորիկներու մէջ Մեր քահանայա-
 պետական տէրութիւնը եւ գրեթէ բոլոր Իտալիան
 խեղճ եղանակաւ մը կը յուզի ու կը խռովի, որն
 որ Մեր սրտին մեծ ցաւ է, մեծարգոյ եղբարք: Եւ
 երանի՜ թէ մարդիկ ասանկ արամալի իրաց դէպքե-
 րով խրատուած՝ անգամ մը իմանային թէ ուրիշ
 բան մը չկայ որ կարող ըլլայ իրենց այնչափ վնասա-
 կար ըլլալ՝ որչափ ճշմարտութեան, արդարութեան,
 համեստութեան եւ կրօնի ճամբէն խոտորիլ, ու
 ամպարիշտ մարդիկներու անօրէն խորհուրդներուն
 հաւանիլ, ու անոնց դարաններէն ու նենգութիւն-
 ներէն եւ մոլորութիւններէն խաբուիլ ու բռնուիլ:
 Ստուգիւ բոլոր աշխարհք աղէկ զիտէ ու կը վկայէ
 թէ սրչափ եղաւ Մեր հայրական ու խնամոտ սրտին
 փոյթն ու ջանքը՝ Մեր քահանայապետական տէ-
 րութեան ժողովրդոցը ճշմարիտ ու հաստատուն օ-
 դուար, հանգստութիւնն ու երջանկութիւնը հոգա-
 լու, եւ թէ Մեր ներողամտութիւնն ու սէրը ինչ
 պտուղ բերաւ: Բայց այսպիսի խօսքերով ասանկ
 չարիքներու խորամանկ հնարադէպները միայն կը
 դատապարտենք, եւ մենք ուզեն ժողովրդեան մեծ

75-2185



մասին յանցանք մը դնել : Սակայն կը ստիպուինք
 գանգատելու որ նաեւ ժողովրդէն ալ շատերը ա-
 նանկ թշուառութեամբ խաբուեցան՝ որ իրենց ա-
 կանջը Մեր խօսքերէն ու խրատներէն մէկ դի դար-
 ձընելով՝ քանի մը վարդապետաց սուտ վարդապե-
 տութեանցը ալանջ գրին, որոնք ուղիղ ճամբան
 թող տալով եւ խաւարին ճամբաներէն երթալով
 ան միայն կը դիտեն՝ որ գլխաւորաբար անփորձ ու
 տղէտ մարդիկներուն սիրան ու միտքը մեծամեծ ու
 սուտ մուտ խոստմունքներով, մանաւանդ թէ բռնի՝
 խաբէութեան եւ մկրտութեան մէջ ձգեն : Արդէն
 ամէն մարդ գիտէ թէ ինչ աստիճանի գովութիւն-
 ներով ամէն տեղ հռչակուեցաւ ան յիշատակաց
 արժանի ու ընդհանուր թողութիւնը՝ որն որ ընտա-
 նեաց խաղաղութեանն ու հանդարտութեան եւ եր-
 ջանկութեանը համար Մեզմէ շնորհուեցաւ : Բայց
 սով չի գիտեր որ աս թողութիւնն առնողներէն շա-
 տերը չէ թէ միայն իրենց միտքը քիչ մ'ալ բլայ՝
 չփոխեցին, ինչպէս որ կը յուսայինք, այլ նաեւ որ
 աւուր վրայ իրենց խորհրդոյն ու ճգանցը մէջ աւելի
 եւս հաստատուն մնալով՝ բան թող չտուին որուն
 ձեռք չզարնեն ու չփորձեն, որպէս զի Հռոմայ Քա-
 հանայապետին քաղաքային իշխանութիւնը եւ անոր
 կառավարութիւնը, ինչպէս շատոնց կ'աշխատէին,
 խախտեն ու հիմանց կործանեն եւ միանգամայն մեր
 սուրբ կրօնին դէմ սաստիկ պատերազմ յարուցա-
 նեն : Եւ ասիկա դիւրաւ գլուխ հանելու համար ա-
 մենէն աւելի աս միջոցն ընտրեցին՝ որ ի սկզբան
 իրենց կողմը բազմութիւն ժողովն, զանոնք բորբո-
 քեն, եւ շարունակ ու մեծ մեծ խռովութիւններով
 վրդովեն. եւ Մեր բրած շնորհքները պատճառ առ-
 նելով՝ հետզհետէ խռովութիւնները սնուցանելու
 եւ ամէն որ աճեցընելու սաստիկ փոյթ կը տանէին :
 Ուստի Մեր Քահանայապետութեան սկիզբը ազա-

տուլթեամբ ու ինքնակամ Մեզմէ տրուած շնորհքներն ու թողութիւնները՝ չէ թէ միայն բաղձացուած պատուէները չբերին, հապա եւ ոչ կրցան արմատ ձգել, որովհետեւ նենգութեանց հմուտ ճարտարապետները՝ չարութեամբ ան շնորհքները նոր նոր խռովութիւններ հանելու գործածեցին: Եւ հիմայ, մեծարգոյ եղբարք, լաւ կը համարինք աս ձեր ժողովքին մէջը գէթ թեթեւ եղանակաւ մը ան գործքերուն վըայ խօսիլ եւ հարեւանցի յիշատակել, որպէս զի ամէն բարեսիրտ մարդիկ լուսաւորապէս ու յայտնի ճանչնան թէ Աստուծոյ եւ մարդկային ազգին թշնամիները ինչ կ'ուզեն, ինչ կը բաղձան, եւ միշտ մտքերնին դրածն ու որոշածն ինչ է:

Վպատակներնուս վըայ առանձինն սէր մը ունենալնուս համար կը ցաւէինք ու սաստիկ կը նեղուէինք, մեծարգոյ եղբարք, երբ որ կը տեսնէինք ժողովրդեան ան անդադար շարժումն ու յուզմունքը՝ որոնք թէ հասարակաց հանդարտութեան եւ կարգի ու թէ ընտանեաց առանձնական հանգստեանն ու խաղաղութեանը այնչափ շատ վնասակար են. եւ չէինք կրնար համբերութեամբ տեսնել ան ստէպ ստէպ ստակներու հաւաքմունքը՝ որոնք զանազան պատճառանքներով քաղաքացւոց ծանր նեղութեամբն ու վնասովը կը պահանջուէին: Ուստի 1847ին Ապրիլ ամսոյն մէջ Մեր տէրութեան կարգինալ քարտուղարին հրապարակական հրովարտակովը զանց չառինք ամենուն ծանուցանելու՝ որ աս տեսակ ժողովրդական հաւաքումներէն ու առատաբաշխութիւններէն ետ կենան, ու նորէն խելքերնին ու մտքերնին իրենց առանձնական գործքերուն դարձնեն, եւ վստահութիւննին բոլորովին Մեր վըայ դնեն, եւ ստոյգ կարծեն որ Մենք Մեր հայրական հողն ու մտածմունքը մի միայն հասարակաց հանգիստն ապահովընելու դարձուցած ենք, ինչ-

պէս որ արդէն շատ ու յայտնի երեւելի ցոյցերով
 ու պատճառներով ցուցրցած էինք: Բայց Մեր աս
 օգտակար ու փրկաւէտ խրատները՝ որոնցմով ժողովրդեան այնչափ յուզմունքը ցածցընելու եւ նոյն
 իսկ ժողովուրդը հանդատեան ու հանդարտութեան
 սիրովը բորբոքելու կը ջանայինք, ոմանց չար
 բաղձանքներովն ու մենքենաներովը շատ սաստիկ
 հակառակութիւն կը կրէին: Ուստի խռովութեանց
 ու յուզմանց անխոնջ առաջնորդները՝ որոնք որ ար-
 դէն Մեր հրամանաւը մի եւ նոյն կարգինային ձեռ-
 քովը ժողովրդեան ուղիղ ու օգտակար կրթութեան
 յառաջացման համար դուրս տրուած ուրիշ կարգա-
 դրութեան դէմ կեցած էին, Մեր խրատներն ալ ի-
 մանախոն ակէս՝ չղաղբեցան ամէն տեղ անոնց դէմ
 աղաղակելու եւ սաստիկ ջանքով մը անզոյշ խառ-
 նիճաղանճը վրդովելու եւ խորամանկութեամբ զա-
 նոնք դրդելու եւ համոզցընելու որ չըլլայ թէ Մեզմէ
 այնչափ բաղձացուած հանդարտութեան իրենք զի-
 րենք ուզեն տալ, վասն զի, կ'ըսէին, ան հանդար-
 տութեան տակը նենդաւոր խորհուրդ մը ծածկուած
 է, որպէս զի ժողովուրդը մեկ եղանակաւ մը թմրի
 քնանայ, եւ այնպէս վերջէն խիստ ծառայութեան
 լուծին տակը դիւրաւ կարենայ ճնշուիլ: Եւ ան
 ժամանակէն սկսած շատ զրուածներ նաեւ տպուած
 ալ եւ դառն նախատինքներով, թշնամանքներով
 ու սպառնալիքներով լեցուն Մեզի խրիուեցան, զո-
 ռոնք որ յաւիտենական մոռացման մէջ թաղեցինք
 ու բոցերու մատնեցինք: Բայց որպէս զի աս թշնա-
 միները հաւատալի ընեն իրենց կեղծած սուտ վտանգ-
 ները՝ որոնք արդէն ժողովրդեան գլուխը հասած
 են կը պոռային, չզարհուրեցան մասնաւոր իրենցմէ
 հնարուած շինծու դաւաճանութեան մը համբաւ ու
 երկիւղ ժողովրդեան մէջ տարածելու, եւ ամօ-
 թալի ստախոսութեամբ մը ձայն հանելու որ աս

երդմնակցութեան վախճանը Հռոմ քաղաքը ներ-
քին ու ընտանի պատերազմով, սպանութիւններով ու
դիակներով պղծելն է, որպէս զի նոր կարգադրու-
թիւնները բոլորովին վերցուելով ու ջնջուելով կառա-
վարութեան առջի ձեւը նորէն կենդանանայ: Սակայն
թշնամիները աւ սուտ երդմնակցութեան պատճա-
ռանքով ան կը դիտէին՝ որ ժողովրդեան արհամար-
հանքն, ատելութիւնն ու կատաղութիւնը մէկ քանի
ընտիր, առաքինութեամբ ու կրօնիւ պայծառացած
ու նաեւ եկեղեցական աստիճանով ու պատուով ալ
երեւելի եղող անձանց դէմ չարամտութեամբ մը
դրդեն ու դրդուն: Աղէկ դիտէք որ աւ բաներս
եփելու ատենը՝ Մեզի առաջարկուեցաւ քաղաքային
զինուոր դնել, եւ այնչափ շուտութեամբ ժողովուե-
ցաւ՝ որ անոր ուղիղ կարգաւորութիւնն ու կրթու-
թիւնը հոգալը անկարելի եղաւ:

Ս երջէն երբ որ հասարակաց տեսչութեան յա-
ռաջացումն աւելի եւս հոգալու համար Տէրութեան
խորհրդակցութիւն (Status Consultatio) մը հաս-
տատել պատշաճ սեպեցինք, անմիջապէս թշնա-
միք անկից առիթ առին՝ կառավարութեան վրայ
նոր նոր վէրքեր դնելու, եւ միանգամայն անանկ
ըրին որ աւ կարգադրութիւնը որն որ ժողովրդեան
հասարակաց շահուն մեծ օգուտ կրնար ըլլալ՝ վնա-
սակար ու կործանման պատճառ ըլլայ: Եւ որովհե-
տեւ արդէն անոնց կարծիքը զօրացած էր՝ որոնք
կ'ըսէին որ ան կարգադրութեամբ թէ քահա-
նայապետական կառավարութեան որպիսութիւնն ու
բնութիւնը կը փոխուի, եւ թէ՛ Մեր իշխանութիւնը
խորհրդակիցներուն վճռոյն տակ կ'իյնայ, անոր համար
նոյն խի ան Տէրութեան խորհրդակցութեան դրուե-
լուն օրը՝ անփոյթ չեղանք մէկ քանի խռովարար
մարդիկները՝ որոնք խորհրդակիցներուն ընկերացած
էին՝ ծանրութեամբ մը խիստ ու սասաիկ խօսքերով

խրատելու, ու աս կարգադրութեան ճշմարիտ վախճանը լուսաւոր ու որոշ եղանակաւ անոնց յայտնելու: Բայց խռովարարները՝ ժողովըդեան խաբուած մասը աւելի եւս սաստկութեամբ գրգռելէն երբեք չէին դադրեր, եւ իրենց կողմնակիցներուն թիւն աւելի դիւրաւ պահելու եւ աճեցընելու համար՝ թէ Մեր քահանայապետական տէրութեան մէջ եւ թէ արտաքին ազգաց առջեւը ամենամեծ անամօթութեամբ եւ յանդգնութեամբ մը կը հրատարակէին՝ որ Մենք անոնց կարծեացն ու խորհրդոցը բոլորովին հաւանած ենք: Պիտի յիշէք, մեծարգոյ եղբարք, որ Մեր 1847ին Հոկտեմբերի 4ին Ձեզի խօսած ժողովական ատենախօսութեան (Consistorialis allocutio) մէջ ինչ խօսքերով բոլոր ժողովուրդը խրատեցինք ու յորդորեցինք՝ որ ան խաբեբաներուն նենդութենէն մեծ փութով զգոյշ կենան: Սակայն անդիէն դաւաճանութեանց եւ խռովութեանց յամառ առաջնորդները՝ աղմուկն ու երկիւղը շարունակ սնուցանելու եւ գրգռելու համար՝ անցած տարւան Յունուար ամսոյն մէջ արտաքին պատերազմի մը ունայն համբաւ մը հանելով անզգոյշներուն սիրտը վախով կը թնդացընէին, ու առհասարակ ժողովըդեան մէջ անանկ կը տարածէին՝ որ նոյն պատերազմը ներքին դաւաճանութիւններով ու կառավարողներուն չարամիտ անգործութեամբը կը պաշտպանուի ու կը հաստատուի կտր: Իսկ Մենք սիրտերը հանդարտեցընելու ու նենդաւորներուն ստութիւնները մերժելու համար՝ առանց ամենեւին յապաղելու նոյն տարին Փետրուարի 10ին աս տեսակ լուրերուն բոլորովին սուտ ու այլանդակ ըլլալը յայտնեցինք այնպիսի խօսքերով՝ զորոնք ամէնքդ ալ արդէն ալէկ գիտէք: Եւ նոյն ատենը, որն որ հիմայ Աստուծոյ օգնութեամբը պիտի ըլլայ, Մեր սիրելի հպատակներուն յառաջուրնէ ըսինք թէ ժամանակ պիտի ըլլայ որ անթիւ անհա-

մար որդիք՝ ամենայն հաւատացելոց Հօրը տունը՝ այս ինքն Եկեղեցւոյ Տէրութիւնը պաշտպանելու համար պիտ' որ վազեն գան, թէ որ երախտագիտութեան ան անձուկ կապանքը քակուելու ըլլայ, որով որ Իտալիայի իշխաններն ու ժողովուրդը ներքուստ իրարու մէջ պէտք էին կապուած ըլլալ, եւ թէ որ նոյն ժողովուրդները իրենց իշխաններուն իմաստութիւնն ու անոնց իրաւանցը սրբութիւնը մեծարելու եւ բոլոր զօրութեամբ պաշտպանելու եւ պատսպարելու անփոյթ ըլլան:

Եւ թէպէտ Մեր ան խօսքերը՝ զորոնք որ հիմայ յիշատակեցինք, քիչ մը ժամանակ հանդարտութիւն պատճառեցին անոնց՝ որոնց որ կամքը ան հանապազօրդեան խռովութեան միշտ դէմ կը զենէր, բայց Եկեղեցւոյ եւ մարդկային ընկերութեան սաստիկ թշնամեացն առջեւը ամենեւին ազդեցութիւն մը չըրին, որոնք արդէն նոր նոր խռովութիւններ ու շփոթութիւններ կը հանէին: Ասան զի ասոնք ու ասոնց նմանները՝ աստուածային պաշտաման նուիրուած ու Եկեղեցւոյ առջեւը արդիւնաւոր կրօնաւորներուն դէմ շարունակ զրպարտութիւններ սերմանելով՝ ժողովրդեան բարկութիւնը ամենայն սաստիկութեամբ անոնց դէմ գրգռեցին ու բորբոքեցին: Եւ զիտէք դուք, մեծարգոյ եղբարք, որ անցեալ տարւան Մարտի 10ին Մեր ժողովրդեան խօսած խօսքերը՝ որոնցմով Մենք ան կրօնաւորական ընկերութիւնը* աքսորուէլէն ու ցրուելէն ազատելու սաստիկ ջանացինք՝ ազդեցութիւն մը չունեցան:

Երբոր՝ ասոնք ըլլալու ատենը՝ անդիէն ան նշանաւոր քաղաքային իրաց խառնակութիւնները Իտալիայի ու Եւրոպայի մէջ պատահեցան, դարձեալ նոյն տարւան Մարտի 30ին Մենք Մեր առաքելական

* Յիսուսեանց ընկերութիւնը:

ճայնը բարձրացրնելով՝ բոլոր ժողովուրդը ամէն անգամէն աւելի զօրաւոր եղանակաւ խրատեցինք ու յորդորեցինք, որ շատ փոյթ տանին թէ կաթուղիկէ Եկեղեցւոյ ազատութիւնը մեծարելու, թէ քաղաքային ընկերութեան կարգը պահելու, թէ ամէն մարդու իրաւունքը պաշտպանելու, եւ թէ մեր սուրբ կրօնին պատուիրանները կատարելու, ու զլիաւորաբար ամէն մարդ առհասարակ քրիստոնէական սիրով սիրելու, վասն զի թէ որ իրենք աս բաները չընելու ըլլան, ստուգիւ գիտնան որ Աստուած կը ցուցնէ թէ բոլոր ժողովրդոց տէրն ինքն է :

Եւ արդէն ամէնքդ ալ աղէկ գիտէք որ ինչպէս Խաղիայի մէջ սահմանադրական կառավարութեան կերպը մտաւ, եւ ինչ եղանակաւ անցած տարւան Մարտի 14ին Մեր Հպատակներուն Մեզմէ շնորհուած օրէնսդրութիւնը (Statutus) հրատարակուեցաւ: Բայց որովհետեւ հասարակաց հանդարտութեան ու կարգի անհաշտ թշնամիներուն ամենէն սիրելի բանն ան էր՝ որ ամէն ճիգը քահանայապետական կառավարութեան դէմ ի դործ դնեն, եւ շարունակ աղմուկներով ու կասկածանքներով ժողովուրդը խռովեն ու վրդովեն, անոր համար երբեք չգաղբեցան դրուածներ դուրս տալով, ժողովակներով, ընկերութիւններով եւ ուրիշ հնարքներով կառավարութեան դէմ սաստիկ ամբաստանութիւններ ընելու եւ անիկայ անպործ, նենգաւոր ու խաբեբայ կոչելու, թէպէտ եւ կառավարութիւնը ամենայն ջանքով ու փութով անոր միայն կը նայէր՝ որ այնչափ բաղձացուած օրէնսդրութիւնը (Statutus) որչափ կարելի է նէ՛ շուտով հրատարակուի: Եւ հոս տեղս կ'ուզենք բոլոր աշխարհքիս յայտնել որ նոյն ատենը ան մարդիկները իրենց՝ քահանայապետական տէրութիւնը եւ բոլոր Խաղիան տակն ու վրայ ընելու եւ կործանելու յառաջադրութեանը

մէջ հաստատուն մնալով՝ Մեզի առաջարկեցին որ չէ թէ Սահմանադրութիւն, այլ Հասարակապետութիւն հրատարակենք իբրեւ Մեր ու Եկեղեցւոյ տէրութեան փրկութեանը միակ ապաւէն եւ պատուարան: Գեռ ան գիշերուան ժամը դիմացնիս կեցեր է, ու աչուրներնուս առջեւը կը շարժին ան մարդիկները՝ որոնք նենգութեանց ճարտարապետներէն թշուառութեամբ մոլորած ու խաբուած ըլլալով՝ համարձակ անոնց դատը կը պաշտպանէին եւ նոյն հասարակապետութեան հրատարակումը Մեզի կ'առաջարկէին: Որն որ՝ ուրիշ անհամար ու ծանր ծանր ցոյցերը մէկ դի թող տալով՝ շատ յայտնի կը ցուցնէ թէ նոր կարգադրութեանց խնդիրներուն եւ այնպիսի մարդիկներէն այնչափ քարոզուած յառաջագիմութեան միակ նպատակն ան է եղեր՝ որ անոնցմով անդադար խռովութիւնները սնուցուին ու արդարութեան, առաքինութեան, պարկեշտութեան ու կրօնի բոլոր սկզբունքներն ամէն տեղաց բոլորովին վերցուին, եւ միանգամայն ան դարշիլի ու ողբալի եւ նոյն իսկ բնական շահու եւ իրաւանց մեծապէս ընդդէմ եղող Ընկերականութիւն (Socialismus) կամ նոեւ Հասարակականութիւն (Communismus) կոչուած դրութիւնը կամ կերպը բոլոր մարդկային ընկերութեան մեծ վնասովն ու տուժովը ամէն դի մանէ, պաշտպանուի ու ընդհանուր տիրէ:

(Ը)էպէտ եւ աս տրտմալի դաւաճանութիւնը կամ մանաւանդ թէ դաւաճանութեանց աս երկարաձիգ շարքը յայտնի ու բացայայտ էր, սակայն Աստուծոյ թոյլտուութեամբը անոնցմէ շատերուն անձանօթ եղաւ՝ որոնց որ այնչափ պատճառներու համար հասարակաց հանգարտութիւնը պէտք էր շատ սիրելի ըլլալ: Եւ թէպէտ խռովութեանց անխոնջ վերակացունները՝ իրենց վրայ շատ ծանր կասկած կու տային, սակայն դտնուեցան խել մը

բարեսիրտ մարդիկ՝ որոնք անոնց հետ բարեկամութիւն ըրին, զուցէ ան յուսով որ կրնան զանոնք չափաւորութեան ու արդարութեան ճամբուն մէջ բերել:

Մէյ մ'ալ յանկարծ բոլոր Խտալիայի մէջ պատերազմի ազազակ մը հնչեց, որով Մեր քահանայապետական տէրութեան հպատակաց մէկ մասը գրագուռած ու յափշտակուած՝ զէնքի վազեց, եւ Մեր կամացը դէմ դնելով քահանայապետական տէրութեան սահմաններն անցնիլ ուզեց: Գիտէք, մեծարգոյ եղբարք, որ ինչպէս թէ՛ Քահանայապետի եւ թէ՛ ինքնազուլս Իշխանի պարտքերը կատարելով՝ անոնց անիրաւ բաղձանքներուն ընդդէմ կեցանք, որոնք զՄեզ ան պատերազմին մէջ ձգել կ'ուզէին, եւ կը պահանջէին Մեզմէ որ յանկարծական եղանակաւ մը ժողովուած ու երբեք զինուորական արուեստի գիտութիւն ու կրթութիւն չսորված եւ յարմար առաջնորդներէ եւ պատերազմական օգնութիւններէ զուրկ եղող անփորձ երիտասարդները պատերազմի՝ այս ինքն ստոյգ կոտորածի ստիպենք: Եւ ասիկայ կը խնդրուէր Մեզմէ՝ որ թէպէտ եւ անարժան էինք՝ բայց աստուածային տեսչութեան անքնին խորհրդովը Առաքելական պատուոյ աստիճանին բարձրացած ըլլալով ու աս երկրիս վրայ Քրիստոսի փոխանորդութիւնն ընելով՝ խաղաղութիւն պարգեւող եւ եղբայրսիրութիւն ուզող Աստուծմէ յանձնարարութիւն ունինք որ ամէն ժողովուրդները, ամէն ազգերը, ամէն ցեղերը հաւասար հայրական սիրով սիրենք, ամենուն փրկութեան բոլոր զօրութեամբ հոգ տանինք, ու չէ՛ թէ մարդիկները կոտորածի ու մահուան ստիպենք: Թէ որ իւրաքանչիւր իշխան չիկրնար երբեք պատերազմ բանալ՝ բայց եթէ արդար պատճառներու համար, ուրեմն ո՞վ կայ այնչափ անխելք ու անմիտ՝ որն որ յայտնապէս չտեսնէ

Թէ կաթուղիկէ աշխարհքը շատ մեծ իրաւամբ աւելի եւս մեծագոյն արդարութիւն եւ ծանր պատճառներ Հռոմի Քահանայապետէն կը պահանջէ, երբոր նոյն Քահանայապետին մէկու մը դէմ պատերազմ հրատարակելը տեսնէ: Անոր համար Մեր անցած տարւան Ապրիլի 29ին Չեզի խօսած ատենաբանութեան մէջ յայտնապէս ու բացայայտ ծանուցինք՝ որ Մենք բոլորովին ան պատերազմէն հեռու ենք: Եւ նոյն ատենը հերքեցինք ու մերժեցինք Մեզի բնծայուած ստուգիւ խաբէական պաշտօնն ալ, որն որ չէ Թէ միայն Մեր անձին սաստիկ նախատական, այլ նաեւ Իտալիայի ալ շատ մնասակար էր, այս ինքն Թէ Իտալիայի հասարակապետական կառավարութեան մը գահերէց ուղենք ըլլալ: Ստուգիւ Աստուծոյ առանձինն ողորմութեամբը Աստուծմէ Մեր վրայ դրուած՝ խօսելու, խրատելու եւ յորդորելու ամենածանր պաշտօնը ջանացինք կատարելու, անոր համար ալ վստահ ենք որ չիկրնար Մեր վրայ ըսուիլ Եսայեայ ան խօսքը Թէ Վայ է ինչ զի Լուս էրէ: Բայց երանի՜ Թէ Մեր հայրական խօսքերուն, խրատներուն եւ յորդորանքներուն Մեր բոլոր որդիքը ահանջ կախած ըլլային:

Ար յիշէք կարծեմ, մեծարգոյ եղբարք, որ Մեր հիմայ յիշած ատենախօսութենէն ետքը աղմկիչ ու ապստամբ մարդիկներէն ինչ աղաղակներ ու ինչ խռովութիւններ եղան, եւ ինչպէս Մեր վրայ քաղաքային պաշտօնեաներ դրուեցան, որն որ Մեր խորհրդոցն ու սկզբանցը եւ Առաքելական Աթոռոյն իրաւանցը բոլորովին հակառակ է: Մենք արդէն ան ատենէն իտալական պատերազմին անյաջող ելք ունենալը մտօք տեսանք՝ երբ որ ան պաշտօնեաներէն մէկը կը յանդգնէր ըսելու՝ որ Թէպէտ եւ Մեր չուզելովն ու ընդդէմ դառնալովը եւ առանց քահանայապետական օրհնութեան ըլլայ, ի վերայ

այսր ամենայնի պիտի շարունակուի: Եւ նոյն պաշտօնեան՝ Առաքելական Աթոռոյն ծանր անիրաւութիւն ընելով՝ չվախցաւ առաջարկելու որ Հռովի Քահանայապետին քաղաքային իշխանութիւնը անոր հոգեւոր իշխանութենէն բոլորովին պէտք է բաժնուիլ: Գարձեալ նոյն պաշտօնեան քիչ մը ետքը յայտնապէս անանկ բաներ Մեր վրայ զրուցեց՝ որոնցմով Քահանայապետը մէկ եղանակաւ մը մարդկային ազգի հաղորդութենէն կը մերժէր ու դուրս կը հանէր: Արդար ու դժած Տէրն ուզեց իր հզօր ձեռքովը զՄեզ խոնարհեցընել, երբ որ թող տուաւ որ մէկ կողմանէ ճշմարտութիւնը, մէկաւ կողմանէ ստութիւնը ամիսներով սաստիկ պատերազմաւ իրարու հետ կուռին. աս պատերազմին վերջ տուաւ նոր պաշտօնէից ընտրութիւնը՝ որուն ետքէն ուրիշ մը յաջորդեց, եւ ասոր մէջ գովելի հանձարոյն հետ միացած էր միանգամայն առանձինն փոյթ մը՝ թէ հրապարակական կարգը եւ թէ օրինաց պահպանութիւնը պաշտպանելու: Բայց շար ցանկութեանց անսանձ համարձակութիւնն ու յանդգնութիւնը օր ըստ օրէ աւելի եւս զլուխ վերցընելով՝ երթալով կը տարածէր, եւ Աստուծոյ ու մարդկան թշնամիները արիւնջու, յափշտակելու եւ կործանելու երկայնժամանակեան ու սաստիկ ծարաւովը բորբոքած՝ ուրիշ բան չէին բաղձար, բայց եթէ աստուածային ու մարդկային իրաւունքները տակն ու վրայ ընել՝ որպէս զի կարող ըլլան իրենց բաղձանքը կատարել: Ասիկէ ետքը յառաջուրնէ պատրաստուած մեքենաները սկսան յայտնապէս ու հրապարակաւ երեւնալ, եւ ճամբաները մարդու արեամբ ոռոգուեցան, ու սրբապղծութիւններ գործուեցան՝ որոնք երբեք որչափ որ պէտք է նէ՝ չեն կրնար սղբացուիլ. եւ ամօթալի յանդգնութեամբ մը նոյն իսկ Մեր կուրիւրիներն պալատին մէջ բոլորովին չստուած բռնու-

Թիւն Մեզի դէմ գործածուեցաւ : Ուստի երբոր այսչափ նեղութիւններով ճնշուած չէ թէ միայն Իշխանի մը՝ հապա նոյն իսկ Քահանայապետի պարտքերը ազատութեամբ չէինք կրնար կոր կատարել, Մեր սրտին մեծ դառնութեամբը Մեր Աթոռէն հեռանալու պարտաւորեցանք : Աս տրտմալի դէպքերը Մեր հրապարակական բողոքմանց մէջ արդէն պատմած ըլլալով՝ հոս տեղս նորէն յիշատակելը զանց կ'առնենք, որպէս զի չըլլայ թէ անոնց սգալի յիշատակով մեր հասարակաց ցաւը դարձեալ սաստկանայ : Իսկ երբ որ խռովարկու մարդիկները Մեր աս բողոքումներն իմացան, աւելի եւս մեծ յանդգնութեամբ կատղելով եւ ամենուն ալ ամէն տեսակ բաներ սպառնալով՝ ոչ խաբէութեան, ոչ նենգութեան եւ ոչ ալ բռնութեան մը խնայեցին, որպէս զի բարի մարդիկներուն սրտին մէջ որոնք արդէն վախով ընկճած էին՝ առաւել եւս մեծ երկիւղ ձգեն : Եւ Ժողով Տէրութեան (Giunta di Stato) բուած նոր կառավարութեան կերպ մը հաստատելէն եւ Մեզմէ հաստատուած երկու Խորհուրդները (Consilium) բոլորովին վերցընելէն վերջը՝ բոլոր ուժով աշխատեցան որ նոր Ժողովք մը դնեն, որն որ Հռոմէական սահմանադիր Ժողով ուղեցին անուանել : Ստուգիւ Մեր սիրտը կը խորշի ու կը դողայ պատմելու որ ինչ ու որչափ նենգութիւններ բանեցուցին ասոնք՝ որպէս զի աս բանս զլուխ հանեն : Բայց հոս չենք կրնար քահանայապետական Տէրութեան Գատաւորաց (Magistratus) մեծ մասին արդիւնաւորած գովութիւնները լռել, որոնք իրենց անձնական պատիւն ու պաշտօնը չմոռնալով՝ աւելի ուղեցին իրենց պաշտօնէն հրաժարիլ, քան թէ մէկ եղանակաւ այնպիսի բանի մը ձեռք զարնել՝ որով իրենց Իշխանն ու սիրելի Հայրը իր օրինաւոր քաղաքային իշխանութենէն կը կողոպտուէր : Վերջապէս աս Ժողովքը

Ժողովուեցաւ, եւ Հռոմայեցի փաստաբան մը իր՝ Ժողովականներուն խօսած ճառին սկիզբը՝ ամենուն ալ յայտնապէս ու բացայայտ իմացուց որ Թէ ինք եւ Թէ զարհուրելի խռովութիւններ հանող իր ուրիշ ընկերները ինչ կարծիք ունին, ինչ կ'ուզեն եւ նպատակնին ինչ է: Բարոյական յարազարթնման օրէնք, ինչպէս որ ինք կ'ըսէր, հրամայող ու անողոք է, եւ միանգամայն աս ալ կ'աւելցընէր որ ես եւ ուրիշները շատոնցուրնէ մաքերնիս գրած էինք որ Առաքելական Աթոռոյն ժամանակաւոր տէրութիւնն ու կառավարութիւնը ի հիմանց կործանենք, Թէպէտ եւ Մենք ամէն եղանակաւ իրենց բաղձացածներուն զիջած ըլլայինք: Աս վճիռը Ձեր Ժողովքին մէջ ուղեցինք յիշել, որպէս զի ամէնքն ալ իմանան որ Մենք չէ Թէ մակաբերութեամբ կամ կարծիքով այսպիսի չար կամք մը խռովարարներուն վրայ կը դնենք, հապա զորն որ անձամբ իրենք բոլոր աշխարհքիս բացայայտ ու հրապարակաւ յայտնեցին, ուր որ նոյն իսկ ամօթը այնպիսի վճիռ մը խօսելէն զերենք ետ կեցընելու էր: Արեւմտ ասոնք չէ Թէ աւելի ազատ կարգադրութիւններ, չէ Թէ հասարակաց տեսչութեան աւելի օգտակար հոգացողութիւն, չէ Թէ ամէն տեսակ խոհեմ՝ կարգ կանոն կը բաղձային, հապա Առաքելական Աթոռոյն քաղաքային իշխանութիւնն ու զօրութիւնը զարնել, խախտել ու բոլորովին տապալել կ'ուզէին: Եւ աս խորհուրդը որչափ որ ձեռքերնէն եկաւ նէ՛ գլուխ հանեցին իրենց Հռոմէական սահմանադիր կոչած Ժողովքին աս տարւան Փետրուարի Գին հանած վճռովը՝ որով ծանուցին որ Հռոմայ քահանայապետները Թէ իրաւամբք եւ Թէ գործով ժամանակաւոր կառավարութենէ վար ինկած են. ասով չենք գիտեր որ արդեօք Հռոմայ Եկեղեցւոյն իրաւանցն ու անոր հետ կապուած Առաքելական պաշտօնը կատարելու ազա-

տութեան գէմ եղած անիրաւութիւնը աւելի մեծ եղաւ՝ չէ նէ քահանայապետական տէրութեան հպատակաց վնասն ու թշուառութիւնը: Ստուգիւ այսչափ տխրական գործքերու համար քիչ տրամուծիւն չզգացինք, մեծարգոյ եղբարք, եւ մանաւանդ ամենէն աւելի անոր ցաւեցանք՝ որ Հռոմ քաղաքը՝ որն որ կաթուղիկէ ճշմարտութեան ու միութեան կենդրոնն ու առաքինութեան եւ սրբութեան վարդապետ է, ամպարիշտ մարդկան ջանքովը՝ որոնք օր ըստ օրէ Հռոմ կը թափին, բոլոր ազգաց, ժողովրդոց ու ցեղից առջեւը այնչափ չարեաց առաջնորդ պիտի երեւայ: Բայց սակայն Մեր սրտին այսչափ ցաւերուն մէջ մէկ ուրախութիւն մ'ունեցանք, վասն զի կրնանք հաստատել որ թէ Հռոմի ժողովրդեան եւ թէ Մեր քահանայապետական տէրութեան ուրիշ ժողովրդոց շատ մեծ մասը՝ Մեզի ու Առաքելական Աթոռոյն հաստատութեամբ յարած ըլլալով՝ ան ամօթալից մեքենաներէն զարչեցաւ ետ կեցաւ, թէպէտ եւ անչափ տխուր դէպքերու հանդիսատես եղաւ: Մեծ միթարութեան պատճառ եղաւ Մեզի նաեւ Մեր քահանայապետական տէրութեան եպիսկոպոսներուն ու կղերաց հոգաբարձութիւնը, որոնք վտանգներու եւ ամէն տեսակ դժուարութիւններու մէջ իրենց ծառայութեան ու պաշտաման պարտքերը կատարելէն չդադրեցան, որպէս զի նոյն ժողովուրդը թէ խօսքով եւ թէ օրինակաւ ան խռովութիւններէն ու նախատալից ապրտամբական խորհուրդներէն ետ կեցընեն:

Մենք այսչափ խռովութեանց մէջ առանց փորձելու բան մը թող չտուինք, որպէս զի հասարակաց հանդարտութեան ու կարգի կանոնի խնամ տանինք: Վասն զի Նոյեմբերի տրամալի դէպքերը պատահելէն շատ յառաջ՝ ամենայն փութով հոգացինք՝ որ Առաքելական Աթոռոյն ծառայող Հե-

լուեախացի զինուորները նաեւ Մեր շրջակայ գաւառները բնակողներն ալ Հռոմ բերուին, բայց աս բանս Մեր կամացը դէմ Մայիս ամսոյն պաշտօնէից ջանքովն ի գործ չդրուեցաւ: Աս միայն չէ, հապա անկէ յառաջ ալ եւ անկէ ետքն ալ ջանացինք որ թէ գլխաւորաբար Հռոմ կարգի դնելու համար եւ թէ թշնամիներուն յանդգնութիւնը զսպելու համար ուրիշ զօրք ժողովենք, բայց՝ Աստուծոյ այսպէս թողլտուութեամբը, իրաց ու ժամանակաց դէպքերուն համար չկրցանք գտնել: Աւերջապէս նոյն իսկ Նոյեմբերի ողբալի դէպքերէն ետքն ալ Յունուարի Ծին գրած նամակովնիս բոլոր Մեր տեղացի զօրքը սաստիկ յորդորեցինք որ կրօնն ու զինուորական պատիւը յիշելով՝ իրենց Իշխանին երդուած հաւատարմութիւննին պահեն, եւ շատ փոյթ տանին որ ամէն տեղ թէ հրապարակական հանդարտութիւնը եւ թէ օրինաւոր կառավարութեան պարտաւորուած հնազանդութիւնն ու հպատակութիւնը պահուի: Միայն ասիկա չէ, այլ նաեւ հրաման տուինք որ Հելլուեախացի զօրքը դէպ ի Հռոմ քալէ, որոնք Մեր աս կամացը չհնազանդեցան, որովհետեւ գլխաւորաբար անոնց հրամանատարը աս նիւթիս մէջ ուղղութեամբ ու պատուով չվարուեցաւ:

Այլ աս ատենները երկպառակութիւն սերմանողներն ալ ամէն օր աւելի եւս յանդգնութեամբ ու սաստակութեամբ իրենց գործքը յառաջ տանելով՝ թէ Մեր անձը եւ թէ Մեր կողմնակիցները ամէն տեսակ զարհուրելի զրպարտութիւններով եւ թշնամանքներով վիրաւորելէն չէին դադրեր. նաեւ նոյն իսկ Սուրբ Աւետարանին խօսքերն ու վճիռները անօրէնութեամբ չարաչար կը գործածէին. որպէս զի արտաքուստ ոչխարներու զգեստներով ծածկուած՝ թէպէտ եւ ներքուստ յափշտակող գայլեր ըլլան, անփորձ ռամիկը իրենց չար խորհուրդներուն ու ջան-

քերուն համոզոցընեն եւ անզոյններուն միտքը սուտ
 վարդապետութիւններով թունաւորեն: Իսկ Առա-
 քելական Աթոռոյն ժամանակաւոր իշխանութեան
 հպատակները եւ Մեզի անշարժ հաւատարիմ մնա-
 ցողները՝ իրաւամբ եւ շատ արդարութեամբ Մեզմէ
 կը խնդրէին որ այնչափ ծանր նեղութիւններէն,
 վտանգներէն, թշուառութիւններէն ու վնասներէն
 զիրենք պաշտենք՝ որոնցմով ամէն դիպց կը ճնշուէին:
 Եւ որովհետեւ անոնց մէջէն ոմանք կը գտնուէին՝
 որոնք այսչափ խռովութեանց պատճառ (թէպէտ
 անմեղ պատճառ) զՄեզ կը կարծեն, անոր համար
 կ'ուզենք որ անոնք իմանան թէ Մենք Առաքելա-
 կան բարձր գահուն վրայ ելլելնուս պէս՝ Մեր հայ-
 րենի հոգերն ու խորհուրդները (ինչպէս որ վերը
 ծանուցինք) ստուգիւ հոն դարձուցինք՝ որ Մեր քա-
 հանայապետական տէրութեան ժողովուրդը ամենայն
 փութով լաւագոյն վիճակի մէջ բերենք, բայց թշնա-
 մեաց ու խռովարկուաց ձեռքովն անանկ եղաւ որ
 Մեր ան խորհուրդները պարապի ելան. իսկ անոր
 հակառակ Աստուծոյ թոյլտուութեամբը այնպէս պա-
 տահեցաւ՝ որ ապստամբները երկայն ժամանակուրնէ
 վեր ամէն տեսակ չարութեան հնարքներով իրենց
 նիւթած ու փորձած բաները կրցան գլուխ տանիլ:
 Ուստի դարձեալ կը կրկնենք նոյնը՝ որն որ արդէն
 ուրիշ տեղ ըսինք, այս ինքն թէ անանկ ծանր ու
 ցաւալի տառապանաց մէջ որով գրեթէ բոլոր աշ-
 խարհք այնչափ կը յուզէր ու կը ծփէր, պէտք է
 ճանչնալ որ Աստուծոյ ձեռքը կայ ու Անոր ձայնը
 պէտք է լսել՝ որն որ այնպիսի չարիքներով մարդիկնե-
 րուն մեղքերն ու անօրէնութիւնները սովոր է պատ-
 ժել, որպէս զի փութան արդարութեան ճամբան
 գալու: Արդ լսեն աս ձայնը որոնք որ ճշմարտու-
 թենէն մոլորած են, եւ իրենց ճամբան թող տա-
 լով դառնան աս Տէր. լսեն նաեւ անոնք՝ որոնք

այսպիսի դէպքերու տխուր վիճակին մէջ աւելի իրենց անճնական դիւրութեանցը՝ քան թէ Եկեղեցւոյ բարւոյն եւ ուղղափառութեան յաջողութեան հոգ տարին, եւ յիշեն որ ամենեւին մարդուն օգուտ չունի թէ Կաշխարհ ասեմայն շահեսցի եւ զանոն իր արտօնացի. լսեն Եկեղեցւոյ բարեպաշտ որդիներն ալ, եւ փրկարար համբերութեամբ մը Աստուծոյ սպասելով, եւ շատ փութով իրենց խղճմտանքը մեղաց ամէն բժերէն ու աղտեղութիւններէն մաքրելով՝ Աստուծոյ ողորմութիւնը խնդրեն, եւ աւելի եւս Անոր հաճոյ ըլլալու եւ շարունակ ծառայելու ջանան:

Ասանկ ջերմաջերմ բաղձանքներնուս մէջ չենք կրնար մասնաւորապէս չխրատել ու չյանդիմանել զանոնք՝ որոնք այնչափ ուրախութեամբ կ'ընդունին ան հրովարտակը՝ որով Հռոմայ Քահանայապետը իր քաղաքային իշխանութեան ամէն պատուէն ու աստիճանէն կողոպտուեցաւ, եւ կը հաստատեն ալ որ ան հրովարտակը նոյն իսկ Եկեղեցւոյ ազատութեանն ու երջանկութեանը շատ մեծ նպաստ կ'ըլլայ: Եւ հոստեղս յայտնապէս ու հրապարակաւ կը խոստովանինք, որ Մենք ասոնք տիրելու ցանկութենէն կամ ժամանակաւոր իշխանութեան բաղձանքէն չենք խօսիր, որովհետեւ Մեր բարքն ու բնութիւնը ամէն տեսակ տիրելու սերէն բոլորովին հեռու է: Ի վերայ այսր ամենայնի Մեր պաշտօնը կը պահանջէ որ Առաքելական Աթոռոյն քաղաքային իշխանութիւնը պաշտպանելով՝ Հռոմայ Սուրբ Եկեղեցւոյն իրաւունքներն ու ստացուածները եւ նոյն Աթոռոյն ազատութիւնը՝ որն որ բոլոր Եկեղեցւոյ ազատութեանն ու օգտին հետ կապուած է, ամենայն զօրութեամբ պաշտպանենք: Եւ աս մարդիկները որոնք յիշեալ հրովարտակը ընդունելով՝ այսչափ սուտ ու այլանդակ բաներ կը հաստատեն, կամ չեն զիտեր եւ կամ չզիտնալ կը ձեւացրնեն, որ աստուածային

տեսչութեան առանձինն խորհրդովը եղած է՝ որ Հռոմայեցւոց պետութիւնը շատ թաղաւորութիւններու եւ տեսակ տեսակ վիճակներու բաժնուելու ատենը՝ Հռոմէական Քահանայապետը՝ որուն Քրիստոսէն բոլոր Եկեղեցւոյ կառավարութիւնն ու հոգը յանձնուած է, անոր համար քաղաքային իշխանութիւն ունենայ՝ որպէս զի նոյն Եկեղեցին կառավարելու եւ անոր միութիւնը պաշտպանելու ատենը՝ ան ամբողջ ազատութիւնը վայելէ՝ որն որ առաքելական բարձր ծառայութեան պաշտօնը կատարելու համար կը պահանջուի: Ասան զի արդէն ամենուն ալ յայտնի է՝ որ հաւատացեալ ժողովուրդները, ազգերն ու թաղաւորութիւնները ոչ երբեք կատարեալ վստահութիւն ու հնազանդութիւն կ'ունենան Հռոմի Քահանայապետին վրայ, թէ որ տեսնեն որ անիկայ ուրիշ իշխանի մը կամ կառավարութեան մը իշխանութեան տակն է ու ազատ չէ: ԱրովՏետեւ հաւատացեալ ժողովուրդներն ու թաղաւորութիւնները միշտ սաստիկ կը կասկածեն ու կը վախնան՝ որ չըլլայ թէ նոյն իսկ Քահանայապետը որ իշխանին կամ կառավարութեան հպատակն է նէ՝ իր գործքերը անոր կամքին համաձայնցուցած ըլլայ. անոր համար ալ շատ անգամ ասիկա պատճառ բռնելով՝ ան գործքերուն դէմ կը կենան: Եւ ստուգիւ ըսեն նոյն իսկ Առաքելական Աթոռոյն քաղաքային իշխանութեան թշնամիները՝ որոնք հիմայ Հռոմի մէջ կը տիրեն, ըսեն, ի՞նչ վստահութեամբ եւ հպատակութեամբ կ'ընդունէին իրենք Քահանայապետին յորդորանքները, խրատները, հրամաններն ու կարգադրութիւնները, թէ որ գիտնային որ իշխանի մը կամ կառավարութեան մը հպատակ է, եւ մանաւանդ՝ թէ որ այնպիսի իշխանի մը հպատակ եղած ըլլար՝ որուն ու Հռոմէական տէրութեան մէջ երկայն պատերազմ մ'ըլլար:

Հիմայ ամէն մարդ կը տեսնէ որ նոյն իսկ քահանայապետական տէրութեան երկիրներուն մէջ ինչպիսի ու որչափ վէճերով Գրիստոսի անարատ Հարսը կը վերաւորի, ինչ կապանքներով, ինչպիսի ամօթալից ծառայութեամբ սաստիկ կը ճնշուի, եւ որչափ անձկութիւններով անոր տեսանելի Գլուխը կը նեղուի: Ասան զի ո՞վ չի գիտեր որ Հռոմ քաղքին հետ ու անոր Մեզի սիրելի կղերին եւ քահանայապետական տէրութեան բոլոր եպիսկոպոսներուն եւ ուրիշ հաւատացելոց հետ Մեր հաղորդակցութիւնը անանկ կտրուած է որ եւ ոչ կրնանք ազատութեամբ նամակ խաւրել կամ ընդունիլ՝ թէպէտ եւ եկեղեցական ու հողեւոր նիւթերու վրայ բլան: Ո՞վ չի գիտեր որ Հռոմ քաղաքը կաթուղիկէ Եկեղեցւոյ զլխաւոր Աթոռը՝ հիմայ, ո՞հ ցաւոցս, կատաղի զազաններու անտառ եղած է, որովհետեւ ամէն ազգաց այնպիսի մարդիկները մէջը կը վխտան, որոնք կամ ուրացող, կամ հերետիկոս, կամ հասարակականութեան՝ ինչպէս կ'անուանեն, եւ կամ ընկերականութեան վարդապետներն են. եւ սաստիկ աւտելութեամբ կաթուղիկէ ճշմարտութեան դէմ գրգռուած՝ թէ խօսքով թէ գրուածքով եւ ուրիշ ինչ եղանակաւ որ բլայ՝ ամէն տեսակ ժանտաբեր մոլորութիւններ սորվեցընելու, սերմանելու եւ ամենուն միտքն ու սիրտը ապականելու կը ջանան, որպէս զի նոյն իսկ Հռոմի մէջ, եթէ երբեք կարելի է նէ, կաթուղիկէ կրօնի սրբութիւնն ու հաւատոյ անորոգելի կանոնն աւրուի եւ խանգարուի: Ո՞վ արդէն տեղեակ ու յաճ չէ, որ քահանայապետական տէրութեան մէջ Եկեղեցւոյ ինչքերը, մուտքերն ու ստացուածները յանդուզն ժպրհութեամբ ու սեղանակապտութեամբ մը յափշտակուած, փառաւոր տաճարներն իրենց զարդարանքներէն մերկացուցուած, կրօնաւորական վանքերն աշխարհական գործածու

Թիւններու դարձուցուած, Աստուծոյ նուիրուած կուսանքները ուրիշ կամ, ընտիր ու կատարեալ եկեղեցականներն ու կրօնաւորներն անգթութեամբ հալածուած, շղթաներով կապուած ու սպանուած, սուրբ ու հռչակաւոր Առաջնորդները նաեւ կարգինալական պատիւ ունեցողները՝ իրենց հօտերէն անողորմութեամբ անջատուած եւ բանտ նետուած են: Աս չարիքները թէ քահանայապետական երկիրներու մէջ եւ թէ ուրիշ տեղեր՝ ուր որ ասոնք կամ իրենց նմանները կը տիրեն, Եկեղեցւոյ եւ անոր իրաւանցն ու ազատութեանը դէմ գործուելու ատենը՝ անդիէն իրենք ամէն տեղ ազատութիւն կ'աղաղակեն, ու կը ձեւացնեն որ իրենց բաղձանքն ան է՝ որ Քահանայապետին վերին իշխանութիւնը բոլորովին ամէն տեսակ կապերէն արձակուած ամէն ազատութիւնը վայելէ:

Արդէն ամէն մարդ դիտէ որ ինչ տխուր ու ցաւալի վիճակի մէջ կը գտնուին Մեր սիրելի հպատակները այնպիսի մարդիկներուն ձեռքովը՝ որոնք Եկեղեցւոյ դէմ այնչափ չարութիւններ կը գործեն: Ասան զի հասարակաց դանձր ցրուած ու սպառած է, վաճառականութիւնը դադրած ու գրեթէ մարած, թէ մեծամեծաց եւ թէ ուրիշներուն վրայ սաստիկ շատ տուրքեր դրուած, առանձնականաց ինչքերը յափշտակած են անոնք՝ որոնք զիրենք ժողովրդեան վարիչ ու անսանձ խմբերու առաջնորդներ կ'անուանեն, ամէն բարիներուն ազատութիւնն ահու եւ դողու մէջ կը ծփի, եւ անոնց հանգստութիւնը մեծ վտանգի հասած է, նոյն իսկ կեանքերնին ալ յելուզակներու գաշունին տակ ինկած է, եւ ուրիշ մեծամեծ եւ ծանր ծանր չարիքներ եւ վնասներ՝ որոնցմով շարունակ քաղաքացիք այնչափ կը չարչարուին ու կը զարհուրին: Ասոնք են ահաւաստիկ ան երջանկութեան երախայրիքը (առաջին

պտուղը)՝ զորն որ Քահանայապետութիւնը բռնաբարողները՝ քահանայապետական տէրութեան ժողովրդոցը կ'աւետէին ու կը խոստանային:

Արդ մեծ ու անհաւատալի ցաւոց մէջ՝ որով թէ Եկեղեցւոյ եւ թէ Մեր քահանայապետական տէրութեան ժողովրդոցը կրած այնչափ թշուառութեանցը համար ներքուստ կը տանջուէինք, աղէկ ճանչնալով որ Մեր պաշտօնին բնութիւնը կը պահանջէ որ ան թշուառութիւնները մերժելու եւ վանելու համար ամենայն ճիղն ի դորձ դնենք, անցած տարւան Գեկտեմբերի Կէն սկսած բոլոր Իշխանաց ու ազգաց նպաստն ու օգնութիւնը խնդրեցինք: Եւ հիմայ, մեծարգոյ եղբարք, չենք կրնար զՄեզ բռնել որ Չեղի ՀՀաղորդենք Մեր զգացած առանձինն մխիթարութիւնը՝ երբ որ ան իշխաններն ու ժողովուրդը նաեւ անոնք ալ՝ որոնք կաթուղիկէ միութեան կապովը Մեզի հետ կապուած չեն, իրենց Մեզի ունեցած յօժար կամքը մէկ աղէկ եղանակաւ մը ցուցնելու եւ յայտնելու ջանացին: Աս բանս Մեր սրտին սաստիկ ցաւը զարմանալի եղանակաւ թէթեւցընելովն ու մխիթարելովը շատ յայտնի կը ցուցնէ՝ որ ինչպէս Աստուած իր սուրբ Եկեղեցւոյն միշտ օգնական ու պաշտպան կը կենայ: Եւ կը յուսանք որ ամէն մարդ կ'իմանայ թէ ան ծանր չարիքը՝ որոնցմով այսպիսի դառն ատեններս ժողովուրդներն ու թագաւորութիւնները կը չարչարուին, մեր սուրբ կրօնը արհամարհելէն յառաջ եկաւ, եւ թէ ուրիշ տեղէն մխիթարութիւն ու դարման չեն կրնար ունենալ՝ բայց եթէ Քրիստոսի աստուածային վարդապետութենէն եւ Անոր Սուրբ Եկեղեցիէն՝ որն որ ամենայն առաքիներութեանց առատ ծնիչն ու սնուցիչն է, եւ մոլութիւնները կը հալածէ, որովհետեւ ամէն մարդու ճշմարտութիւնն ու արդարութիւն կը սորվեցընէ, ու զանոնք կը ստիպէ որ մէկզմէկ սիրեն, եւ քաղաքային ընկերու-

թեան հասարակաց բարւոյն ու կարգաւորութեանը զարմանալի եղանակաւ մը կը զգուշանայ ու հոգ կը տանի :

Բոլոր իշխանաց օգնութիւնը խնդրելէն ետքը, Աւստրիայէն՝ որն որ Մեր քահանայապետական տէրութեան հիւսիսակողման սահմանակիցն է, անոր համար աւելի սիրով օգնութիւն խնդրեցինք, որովհետեւ Աւստրիան չէ թէ միայն Առաքելական Աթոռոյն ժամանակաւոր տէրութիւնը պաշտպանելու համար միշտ իր պատուական օգնութիւնը մատուցած է, հապա վասն զի հիմայ հաստատուն յոյս կայ որ աս Տէրութիւնը Մեր սաստիկ բաղձանացն ու Մեր արդար խնդիրքին համաձայն պիտի վերցընէ ան մէկ քանի ծանօթ սկզբունքները՝ որոնք Առաքելական Աթոռէն միշտ մերժուած են, եւ անով հոնտեղս եկեղեցին դարձեալ իր յառաջուան ազատութիւնը պիտ'որ ստանայ, որն որ անտեղացի հաւատացելոց շատ մեծ բարիք ու օգուտ է : Աս բանս Չեզի պատմած ատեննիս՝ Մեր սրտին մէջ քիչ մխիթարութիւն չենք զգար, անոր համար ամենեւին չենք տարակուսիր որ Չեզի ալ շատ ուրախութիւն պիտի պատճառէ :

Նոյն օգնութիւնը Գաղղիական Ազգէն ալ խնդրեցինք, որուն Մեր հայրական սրտին մէջ մէկ առանձինն յօժարութիւն ու սէր մ'ունինք, որովհետեւ ան Ազգին կղերն ու հաւատացեալ ժողովուրդը ամէն տեսակ որդիական սիրոյ եւ հպատակութեան նշաններով՝ Մեր թշուառութիւններն ու անձկութիւնները թեթեւցընելու եւ մխիթարելու աշխատեցաւ :

Նաեւ Սպանիայի օգնութիւնն ալ կանչեցինք, որն որ Մեր նեղութեանցը վրայ սաստիկ վշտանալով ու հոգ ունենալով՝ ամենէն յառաջ ուրիշ ուղղափառ ազգերը յորդորեց որ մէջերնին որդիական

դաշինք մը դնելով՝ հաւատացելոյ հասարակաց Հայրն ու Եկեղեցւոյ հովուապետը նորէն իր Աթոռը դարձրնելու ջանան:

Ա երջապէս աս օգնութիւնը կրկին Սիկիլիայի թագաւորութենէն ալ ուզեցինք, ուր որ հիմայ անոր Թագաւորին քովը՝ հիւր եղած ենք, ան Թագաւորին՝ որն որ բոլոր զօրութեամբ իր ժողովրդոցը ճշմարիտ ու հաստատուն երջանկութիւնը յառաջ տանելու պատաղելով՝ կրօնասիրութեամբ ու աստուածպաշտութեամբ այնչափ պայծառացած է որ նոյն իսկ իր ժողովրդեանը օրինակ կրնայ ըլլալ: Եւ թէպէտ չենք կրնար խօսքով յայտնել թէ որչափ հոգով ու փութով նոյն Իշխանը Մեզի ունեցած իր ազնիւ որդիական սէրն ամէն տեսակ ծառայութիւններով ու վեղեցիկ գործքերով շարունակ կը ցուցընէ ու կը հաստատէ, բայց նոյն Իշխանին Մեզի ունեցած երեւելի արդեանցը յիշատակը երբեք պիտի չմոռցուի: Չենք կրնար լռութեամբ անցնիլ ան բարեպաշտութեան, սիրոյ ու հպատակութեան նշանները՝ որոնցմով նոյն թագաւորութեան կղերն ու ժողովուրդը Մեր գալէն մինչեւ հիմայ՝ զՄեզ պատուելէն երբեք չզաղրեցաւ:

Անոր համար աս յոյսն ունինք որ Աստուծոյ օգնութեամբք ան ուղղափառ ազգերը Եկեղեցւոյ ու անոր Քահանայապետին ամենայն հաւատացելոյ հասարակաց Հօրը դատը աշուրներնուն անջեն ունենալով՝ որչափ կարելի է նէ շուտով կը փութան կու գան Առաքելական Գահին քաղաքային իշխանութիւնն ազատելու եւ Մեր հպատակաց խաղաղութիւնն ու հանդարտութիւնը նորէն հաստատելու. եւ վստահ ենք որ մեր Սուրբ Կրօնին ու քաղաքային ընկերութեան թշնամիները՝ Հռոմ քաղքէն ու բոլոր Եկեղեցւոյ վիճակէն դուրս կը վաւրնաւորին: Եւ երբոր ասիկայ ըլլայ նէ, ստուգիւ ամենայն

Հսկողութեամբ, փութով ու պնդութեամբ պիտի
 հոգանք՝ որ ան ամէն մտրութիւններն ու ծանր
 ծանր գայթակղութիւնները մերժուին, որոնց հա-
 մար կը պարտաւորինք բարի մարդիկներով մէկտեղ
 այնչափ սաստիկ ցաւիլ: Եւ նախ եւ առաջ ամէն բա-
 նէն աւելի պիտի աշխատինք որ ամպարշտաց ստու-
 թիւններէն, խաբէութիւններէն ու նենգութիւննե-
 րէն խեղճ եղանակաւ մը խաբուած մարդիկներուն
 միտքն ու կամքը՝ յաւիտենական ճշմարտութեան
 լուսովը լուսաւորուին, որով նոյն մարդիկները մտր-
 րութեանց ու մուլութեանց աղէտալի պտուղները
 ճանչնան, ու առաքինութեան, արգարութեան եւ
 կրօնի շաւիղը գրկելու գրգռուին ու բորբոքուին: Կ-
 վասն զի շատ աղէկ գիտէք, մեծարգոյ եղբարք, ան
 զարհուրելի ու ամէն տեսակ կարծեաց հրէշները
 որոնք ի կործանումն եւ ի կորուստ ժողովրդեան
 անդրնդոց մէջէն դուրս ելլելով՝ ընդհանուր տիրե-
 ցին ու կատաղութեամբ ծաւալեցան, որով եւ կրօնի
 ու քաղաքային ընկերութեան մեծ վնաս եղաւ:
 Թշնամիք երբեք միջոց թող տուած չեն կամ խօս-
 քով կամ գրուածքով եւ կամ հրապարակական
 հանդէսներով աս չար ու ժանտագործ վարդապե-
 տութիւնները առհասարակ սերմանելու, որպէս զի
 ամէն տեսակ անօրէնութեան, ցանկութեան ու ան-
 առակութեան անասնճ համարձակութիւնը որ ըստ
 օրէ աւելի եւս աճի ու տարածուի: Ասկից են ան
 ամէն դժբախտութիւնները, կործանումներն ու տրտու-
 մութիւնները՝ զորոնք մարդկային ազգն ու զրեթէ-
 բորը աշխարհք կրեց ու կը կրէ: Գիտէք արդէն որ
 մեր սուրբ կրօնին դէմ ինչ պատերազմ կ'ըլլայ կոր
 հիմայ նոյն իսկ Խապիւայի մէջ, եւ թէ ինչպիսի նեն-
 գութիւններով ու մեքենաներով կը ջանան կրօնի
 ու քաղաքային ընկերութեան սաստիկ թշնամիները
 գլխաւորաբար անփորձ մարդիկներուն միտքը հաւա-

տոյ սրբութենէն ու ճշմարիտ վարդապետութենէ մէկ դի գարձընելու, եւ զանոնք անհաւատութեան ամբոխալից ալեացը մէջ ընկղմելու եւ ծանր ծանր չարիքներ գործել տալու: Եւ իրենց խորհուրդները դիւրաւ գլուխ հանելու ու ամէն տեսակ սոսկալի խռովութիւններ ու շփոթութիւններ յարուցանելու եւ յառաջ տանելու համար՝ հերետիկոսաց ճամբան բռնելով՝ Եկեղեցւոյ վերին իշխանութիւնը բոլորովին արհամարհելով՝ ամենեւին չեն վախնար Սուրբ Գրոց խօսքերն ու վկայութիւններն ու վճիռները իրենց չար ու առանձնական մտքովը յառաջ բերելու, մեկնելու, ծռելու եւ աղաւաղելու, եւ ամենէն աւելի ամպարշտութիւնն ան է՝ որ չեն զարհուրիք Քրիստոսի սուրբ անունը անօրէնութեամբ չարաչար գործածելու: Եւ չեն ամբշնար յայտնապէս ու հրապարակաւ հաստատելու որ ամէն սուրբ երդման բռնաբարութիւնն ու ամէն տեսակ ժանտ ու անօրէն նաեւ նոյն իսկ բնութեան յաւիտենական օրինաց ընդդէմ եղող գործքերը՝ չէ թէ միայն դատապարտելի չեն, հապա նաեւ բոլորովին օրինաւոր, եւ մեծ գովութեան ալ արժանի՝ թէ որ՝ ինչպէս իրենք կ'ըսեն՝ հայրենեաց սիրոյն համար գործուելու ըլլան: Այսպիսի մարդիկները ասանկ ամպարիշտ ու այլանդակ ձեռնարկութեամբ բոլորովին ամէն պարկեշտութիւն, առաքինութիւն ու արդարութիւն ի հիմանց կը վերցընեն, եւ անլուր անամօթութեամբ մը գողութիւն ու յեղուզակութիւն կը պաշտպանեն ու կը քարոզեն:

Արի չ անթիւ անհամար խաբէութեանց վրայ՝ որոնցմով կաթուղիկէ Եկեղեցւոյ թշնամիները շարունակ կը ջանան որ գլխաւորաբար անգգոյշ ու անփորձ մարդիկները նոյն Եկեղեցւոյ ծոցէն կորզեն ու յափշտակեն, չեն ամբշնար սաստիկ ու ամօթալից զբաւարտութիւններ ալ Մեր անձին դէմ աւելցրնե-

լու: Իսկ Մենք (Թէպէտ եւ առանց Մեր արդիւնաւորութեան) աս երկրիս վրայ Անոր փոխանորդն ըլլալով՝ որ Բաժնատէրն է՝ ոչ փոխարէն Բաժնատէր, չարչարեալ՝ է՝ ոչ պահէր պարտաւորիս, ամէն տեսակ դառն Թշնամանքները ամենայն համբերութեամբ ու լուրթեամբ կրելու եւ զՄեզ հալածողներուն ու զըպարտողներուն համար աղօթք ընելու երբեք չգանդադեցանք: Բայց որովհետեւ Թէ գիտնոց եւ Թէ տգիտաց պարտական ենք եւ ամենուն փրկութիւնը հոգալու կը պարտաւորինք, անոր համար զլիսաւորաբար տկարները գայթակղեցընելէն զգուշանալու համար՝ չենք կրնար աս Ձեր Ժողովոյն մէջ Մեր վրայէն չմերժել ան սուտ ու սաստիկ ամօթալի զըպարտութիւնը՝ որն որ մէկ քանի նորագոյն օրագիրներու ձեռքով Մեր նուաստ Անձին դէմ հրատարակուեցաւ: Եւ Թէպէտ եւ անպատմելի զըուում մը կ'ունենանք երբ որ կը կարգանք ան շինծու գրուածը՝ որով Թշնամիք՝ Մեր ու Առաքելական Աթոռոյն վրայ ծանր վերք դնելու կը ջանան, բայց ամենեւին չենք կրնար վախնալ որ այսպիսի ամօթալից ստութիւնները կարող ըլլան գէթ Թեթեւ մը վնասել ճշմարտութեան ամենաբարձր Գահին ու Մեզի որ ամենեւին առանց արդեանց՝ ան Գահուն վրայ դրուեցանք: Եւ ստուգիւ Աստուծոյ առանձինն ողորմութեամբը կրնանք Մեր Փրկչին ան աստուածային խօսքերն ըսել Թէ Ես՝ յայտնապէս խօսեցայ յաշխարհի . . . եւ ի Զածուի ինչ ոչ խօսեցայ: Եւ հոստեղս, մեծարդոյ եղբարք, պատշաճ կը համարինք զլիսաւորաբար 1847ին Գեկտեմբեր 17ին ձեզի խօսած ատենաբանութեան մէջ ըսածնիս դարձեալ ըսելու եւ կրկնելու, այս ինքն Թէ Թշնամիները որպէս զի աւելի եւս դիւրաւ կարող ըլլան կաթուղիկէ կրօնին ճշմարիտ ու հարազատ վարդապետութիւնն ապականել եւ ուրիշները խաբել ու մոլորցընել՝ ամէն բան

կը մտածեն, ամենայն ինչ կը նիւթեն, ամէն ճիգն ի դործ կը դնեն՝ որ մէկ եղանակաւ մը նաեւ Առաքելական Աթոռն ալ անոնց անմտութեանը մասնակից ու օգնական երեւայ: Ամէն մարդու ծանօթ է թէ ինչ խաւարային ու միանգամայն վնասակար ընկերութիւններ ու աղանդներ զանազան ժամանակներ զանազան անուամբք առ ստախօսներէն ու խտտորնակ վարդապետութիւններ ունեցողներէն ժողովուեցան ու հաստատուեցան, որպէս զի ասով կարենան աւելի եւս ապահովութեամբ իրենց անմտութիւնները, սկզբունքներն ու դիտաւորութիւններն ուրիշներուն մտքին մէջ խոթել, անզոյշներուն սիրան ապականել եւ ամէն տեսակ չարիք անպատիժ դործելու ընդարձակ ճամբայ բանալ: Աս դարշելի կորուստական աղանդները՝ որոնք չէ թէ միայն հոգւոց փրկութեան՝ այլ եւ քաղաքային ընկերութեան բարոյն ու հանդարտութեան սաստիկ հակառակ եւ Հռոմայ Քահանայապետներէն Մեր նախորդներէն դատապարտուած են՝ Մենք ալ միշտ ատեցինք, ու Մեր 1846ին Նոյեմբեր 9ին բոլոր կաթողիկէ Եկեղեցւոյ Առաջնորդներուն հանած շրջաբերական թղթին մէջ դատապարտեցինք, եւ հիմայ ալ նոյնպէս Մեր բարձր Առաքելական իշխանութեամբ կը դատապարտենք, կ'արգելունք եւ կը մերժենք:

Բայց Մենք առ ատենախօսութեամբ չուղեցինք ոչ ամէն մարդութիւնները համբել, որոնցմով ժողովուրդը թշուառութեամբ խաբուելով՝ այնչափ կործանումներու կը մղուի, եւ ոչ ալ մէկիկ մէկիկ թշուառ մեքենաները քննել՝ որով թէ կաթողիկէ կրօնին վնաս կը նիւթեն եւ թէ ամէն կողմանէ Սիոն ամրոցին վրայ դիմելու եւ յարձակելու կը ջանան: Մինչեւ հիմայ այնչափ ցաւով յիշածներնիս բաւականէն աւելի կը ցույբնեն որ ան թշուառութիւններն ու վնասները՝ որոնցմով բոլոր ազգք եւ

ազինք այնչափ սաստիկ կը նեղուին, տարածուած
 չար վարդապետութիւններէն եւ արդարութիւնն ու
 կրօնը արհամարհելէն յառաջ եկան: Արդ որպէս զի
 այնչափ վնասները հեռանան վերցուին, ամենեւին
 ոչ հողալու, ոչ խորհուրդ տալու, ոչ աշխատու-
 թեանց եւ ոչ տքնութեանց պէտք է խնայել՝ որով ան-
 չափ չար վարդապետութիւններն արմատաքի խլուե-
 լով՝ ամէնն ալ իմանան որ ճշմարիտ ու հաստա-
 տուն երջանկութիւնը՝ առաքինութեան, արդարու-
 թեան ու կրօնի կրթութեան վրայ յեցած է: Ուս-
 տի թէ Մենք թէ Գուք եւ թէ ուրիշ մեծարգոյ
 եղբարք այս ինքն բոլոր ուղղափառ տեղեաց Եպիս-
 կոպոսները պէտք ենք շատ ջանքով, փութով ու
 հաստատութեամբ ամէն բանէն աւելի անոր աշխա-
 տիլ՝ որ հաւատացեալ ժողովուրդները թունաւորեալ
 արօտներէն հեռանալով ու առողջարար արօտներու
 վրայ դալով ու օր ըստ օրէ աւելի եւս հաւատոյ
 խօսքերովը սնանելով՝ նենգաւորներուն խաբէու-
 թիւններն ու ստութիւնները ճանչնան ու փախչին,
 եւ աղէկ մը իմանալով որ Աստուծոյ երկիւղը ամե-
 նայն բարութեանց աղբիւր է եւ թէ մեղքն ու ան-
 օրէնութիւններն Աստուծոյ հարուածը կը բերեն՝
 ամենայն փութով չարէն խորշելու եւ բարին կա-
 տարելու ջանան: Անոր համար այնչափ վշտաց մէջ
 ստուգիւ քիչ ուրախութիւն չպատճառեց Մեզի,
 երբ որ իմացանք թէ որչափ արիութեամբ ու հաս-
 տատութեամբ ուղղափառ աշխարհքին մեծարգոյ Ա-
 ռաջնորդները՝ Մեզի ու Սրբոյն Պետրոսի Գահուն
 հաստատուն մնալով՝ իրենց հնազանդ կղերականնե-
 րովը մէկտեղ Եկեղեցւոյ դասն ու անոր ազատութիւնը
 պաշտպանելու քաջութեամբ կ'աշխատին, եւ թէ
 ինչպէս քահանայական հոգով եւ փութով ամէն
 ձեռքերնէն եկածը կ'ընեն որ թէ բարիները աւելի
 եւս բարութեան մէջ հաստատեն, թէ մոլորեալներն

արդարութեան ճամբան բերեն, եւ թէ կրօնի յամառ թշնամիները խօսքով ու գրուածքով կշտամբեն ու յաղթահարեն: Բայց աս իրենց արդիւնաւորած ու արժանաւոր գովութիւնները նոյն մեծարդոյ եղբարց մատուցանելով ուրախանալու առե՛ննիս՝ զանոնք կը քաջալերենք որ Աստուծոյ օգնութեանը վստահանալով շարունակեն աւելի սաստիկ եռանդեամբ իրենց պաշտօնը կատարել ու Աստուծոյ պատերազմը պատերազմիլ, եւ իմաստութեամբ ու զօրութեամբ ձայներնին բարձրացընել՝ Երուսաղեմին քարոզելու եւ Իսրայելին վերքերը բժշկելու համար: Ասոնցմէ զատ՝ շնորհաց աթոռը վստահութեամբ մերձենալէն չզգարին, եւ հրապարակական ու առանձնական աղօթքները յառաջ տանին եւ հաւատացեալ ժողովրդոց ստէպ կրկնեն, որ ամէնն ալ ընդհանուր ապաշխարութիւն ընեն՝ որպէս զի Աստուծմէ ողորմութիւն ընդունին ու յարմար ժամանակին՝ օգնութեան շնորհք գտնեն: Եւ դարձեալ երեւելի միտք ու առողջ վարդապետութիւն ունեցողներն ալ յորդորեն, որպէս զի անոնք ալ իրենց ու Առաքելական Աթոռոյն առաջնորդութեամբը ժողովրդոց միտքը լուսաւորելու եւ չորս կողմը տարածուած մուրթութեանց խաւարը փարատելու փոյթ տանին:

Հոս կ'աղաչենք ի Տէր նաեւ Մեր սիրելի եղբարցը ի Քրիստոս՝ այս ինքն ժողովրդոց Իշխաններուն ու կառավարներուն, եւ կը խնդրենք անոնցմէ՝ որ այնչափ մուրթութեանց ու մուրթեանց պիղծ կոյտէն քաղաքային ընկերութեան եղած վնասները մտադրութեամբ ու ճշգիւ մտածելով՝ հաճին ամենայն հոգով եւ փութով եւ խորհրդով գլխաւորաբար անոր ջանալու որ առաքինութիւնն ու արդարութիւնն ու կրօնը ամէն տեղ տիրեն ու օր աւուր վրայ մեծամեծ աճումներ ընդունին: Եւ դարձեալ բոլոր ժողովուրդք, ազգք ու զանոնք կառավարող-

ները հաստատութեամբ ու փութով մը մտածեն ու խորհին որ ամենայն բարիք արդարութեան կրթութեան վրայ կայացած են, իսկ ամենայն չարիք աւիրաւութենէ յառաջ կու գան: Վասն զի արդարութիւն զազ քարչրացոյցանէ. նոսաղեցոյցանեն զազ քարչ:

Ի այց յառաջ քան Մեր խօսքը վերջացրնելը՝ չենք կրնար Մեր երախտագէտ սրաին զգածմունքները ան ամէն սիրելի որդւոց յայտնապէս ու հրապարակաւ չվկայել, որոնք Մեր թշուառութեանցը վրայ սաստիկ հոգ ընելով՝ բոլորովին առանձինն սիրով մը Մեզի նուէրներ խրկել ուզեցին: Թէպէտ եւ այսպիսի բարեպաշտական տուրքերը Մեզի թեթեւ մխիթարութիւն չեն բերեր, բայց կը պարտաւորինք խոստովանելու՝ որ Մեր հայրական սիրտը շատ անձկութեամբ կը նեղուի, որովհետեւ շատ կը վախնանք որ չըլլայ թէ այսպիսի ախուր դէպքերու ատենը՝ ան սիրելի որդիներն իրենց Մեզի ունեցած սիրոյն սաստիկ ներելով՝ իրենց դժուարութեամբն ու վնասովն ալ աս տուրքերը ուզեն տալ:


Վերջապէս, մեծարգոյ եղբարք, Մենք՝ Աստուծոյ իմաստութեան անքնին խորհրդներովը՝ որոնցմով իր փառքը կը հոգայ, աղէկ մը զՄեզ հանդարտեցրնելէն ետքը, խոնարհութեամբ սրտի մեծ շնորհակալութիւն կը մատուցանենք Աստուծոյ՝ որ արժանի սեպեց զՄեզ Յիսուսի անուան համար թշնամանք կրելու եւ մէկ կողմանէ Անոր չարչարանացը պատկերին նմանող ըլլալու. եւ պատրաստ ենք ամենայն հաւատով, յուսով, համբերութեամբ ու հեղութեամբ ալ աւելի դառն աշխատութիւններ ու տառապանքներ կրելու, նաեւ նոյն իսկ Մեր կեանքը Եկեղեցւոյ համար դնելու, եթէ Մեր արեամբը նոյն Եկեղեցւոյն թշուառութեանցը դարման մը կրնանք նէ ընել: Իսկ հիմայ, մեծարգոյ եղբարք, չդադրինք գիշեր ցորեկ անդադար ու ջերմեռանդ ա-

զօթքներով բազմագութ Աստուծոյ խոնարհու-
 թեամբ աղաչելու եւ պաղատելու՝ որ իր Միածին
 Որդւոյն արդեանցը համար իրեն ամենակարող աջու-
 վը իր սուրբ Եկեղեցին այնչափ փութորիկներէն՝ ու-
 բոնցմով հիմայ կը յուզի, աղատէ, եւ իր աստուա-
 ծային շնորհաց լուսովը ամէն մոլորելոց միտքը լու-
 ցաւորէ, ու իր առատ ողորմութեամբը ամէն օրի-
 նագանցներուն սրտին յաղթէ ու տիրէ, որպէս զի
 ամէն տեղաց բոլոր մոլորութիւնները մերժուելով ու
 բոլոր դժբախտութիւնները հեռանալով՝ ամէնքն
 ալ ճշմարտութեան ու արդարութեան լոյսը տես-
 նեն ու ճանչնան եւ վազեն զան ժողովուն միու-
 թեամբ հաւատոյ եւ ծանօթութեան Տեառն մե-
 բոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ դարձեալ երբեք չդա-
 դրինք Անկից՝ որ կը հաստատէ խաղաղութիւն ի
 բարձունս, որն որ մեր խաղաղութիւնն է, պաղա-
 փանօք խնդրելու՝ որ քրիստոնեաները տանջող ամէն
 չարիքները բոլորովին վերցուելով՝ ամէն տեղ ցան-
 կալի խաղաղութիւնն ու հանդարտութիւնը հաստա-
 տուի: Եւ որպէս զի Աստուած մեր աղաչանքներուն
 գիւրաւ հաւանի՝ Աստուծոյ քովը միջնորդներ բռնենք,
 եւ ամենէն յառաջ անարատ Մարիամ Սուրբ Այոյր,
 որն որ Աստուծոյ եւ մեր մայրը եւ միանգամայն
 մայր ողորմութեան ըլլալով՝ ինչ որ կը խնդրէ նէ՝
 կ'առնու եւ չիկրնար պարապ ելլել: Գարձեալ ե-
 բանելոյն Պետրոսի Առաքելապետի եւ անոր առա-
 քելակից երանելոյն Պօղոսի օգնութիւնն ալ խրն-
 դրենք, նաեւ ամենայն երկնային սրբոց ալ՝ որոնք
 արդէն Աստուծոյ հետ բարեկամ եղած՝ անոր հետ
 երկինքը կը թագաւորեն, որպէս զի անոնց արդիւնքն
 ու աղաչանքը մեզի համար միջնորդ ըլլալով՝ ողոր-
 մածն Աստուած հաւատացեալ ժողովուրդը իր բար-
 կութեան երկիւղներէն աղատէ եւ միշտ պաշտպանէ
 ու իր աստուածային առատ քաղցրութեամբն ու-
 բախացընէ:

Ե Ի Ս Տ Ր Ի Ը Յ Ի

ԵՊԻՍԿՈՊՈՍԵՐՈՒՆ

Հ Ո Վ Պ Ի Ը Կ Ը Ն Ն Ը Մ Ը Կ Ը



ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ ԵԼ ԵՎԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ ԱԼԱՍՏՐԻԱՅԸ աշխարհին գումարեալք ի Վիէննա՝ առհաւատացեալս իւրեանց վիճակացն ողջոյն եւ օրհնութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ :

Աստուծոյ մարդասէր տեսչութեամբք Մէք ստորագրեալ Աւստրիայի եպիսկոպոսքս մեծափառ Վայսերբաղձանքին համաձայն՝ որն որ իր հրաւերովը բուն մեր բաղձանքն ու որոշմունքը դիմաւորեց, Վիէննա ժողովուեցանք, որպէս զի ամէնքնիս միաբան խորհինք ան նիւթերուն վրայ, որոնք՝ Տէրութեան նոր սահմանադրութենէն հրատարակուած քաղաքային իրաց այժմեան կարգադրութեան ատենը՝ Աւստրիայի մէջ եղող կաթուղիկէ Եկեղեցւոյ օգտակար ու շահաւոր կրնան ըլլալ :

Այսպիսի երեւելի գործքի մը Աստուծով սկիզբ ընելու համար՝ Ապրիլի 30ին սրբուհւոյն Կատարինեայ աօնին օրը Սրբոյն Ստեփանոսի աւագամեծար Եկեղեցւոյն մէջ Քրիստոսի սեղանին չորս կողմը ժողովուեցանք, ու սուրբ Պատարագին ատենը Վիէննայի Տերունի Հովուապետին հայրապետական ձեռքէն Քրիստոսի Մարմինն ընդունելով, չորս կողմերնիս պատող հազարաւոր հաւատացելոց հետ մէկտեղ ու նաեւ ամենուղ հետ, որոնք հեռաւոր տեղեր մեզի համար կ'աղօթէք, մեր ու մեր գործքերուն վրայ Հոգւոյն Սրբոյ օգնութիւնը խնդրեցինք. ետքէն ի-

բրեւ մեր եկեղեցական կարծեաց վկայութիւն եւ մեր ընելու որոշմանցը առաջնորդ մը՝ Աստուծոյ եւ բոլոր աշխարհքիս առջեւը միաբան ու հանդիսութեամբ վերջին ընդհանուր Տրիդենտեան ժողովքին՝ ուղղափառ հաւատոյ դաւանութիւնն ըրինք :

Բայց աղէկ դիտնալով որ մենք մեզի յանձնուած թեմերով մէկտեղ՝ Աստուծոյ Եկեղեցւոյն ընդարձակ սահմանին մէջ միայն մաս մը կը կազմենք, առանց դանդաղելու՝ Աստուծոմէ դրուած կենդրոնին՝ Առաքելական Գահին դիմեցինք, եւ սրբազան Հօր՝ Քրիստոսի Հոգեւոր տեղապահին մեր հնազանդութիւնն ու մեր ներքին մեծարանքն ու հաւատարիմ հպատակութիւնը ցուցնելով՝ մեր գործողութեան համար իր օրհնութիւնը խնդրեցինք :

Պարծեալ դիտնալով որ նաեւ կայսեր ալ իբրեւ Տէրութեան գլխաւորի (Ա. Պետր. Բ. 13.) կը վայլէր մեր յարգութիւնն ընել, ամէնքնիս միաբան մեր մեծարանքը կայսեր մատուցինք եւ միանգամայն շնորհակալ եղանք որ զմեզ ասանկ ժողովքի կանչեց, որուն մէջ երախտագիտութեամբ կը ճանչնանք թէ ինք Եկեղեցւոյ արդարութիւն ընելու ուղիղ դիտաւորութիւն ունի :

Ասկէ ետքը հաստատուն փութով մը օրըստօրեայ աշխատալի նիստերով եկեղեցական գործոց վրայ խորհելու սկսանք : Միշտ մտքերնիս ունենալով որ չէ թէ նոր Եկեղեցի մը պիտ'որ շինենք, ինչպէս հիմնական ատենս յիմարական յանդգնութեամբ մը կ'ուզուի, հապա անոր համար դրուած ենք, որպէս զի կառավարենք ան Եկեղեցին՝ որն որ Քրիստոս Փրկիչը հիմնեց ու իր արեամբը փրկեց, որուն մէջ իր Սուրբ Հոգին կը բնակի ու մինչեւ աշխարհքիս վերջը պիտի առաջնորդէ. (Գործք Ա. Ի. 28.) անոր համար մեր նպատակը գլխաւորաբար ան դրինք՝ որ ինչպէս կրնան վերցուիլ ան արգելքները՝ որոնք մինչեւ հի-

մայ Եկեղեցւոյ ազատ ու յաջող յառաջացմանը դէմ կ'ելլէին :

Աս բանիս վրայ խորհածնիս ու որոշածնիս՝ յարմար ժամանակը հասնելուն պէս՝ Եկեղեցիէն սահմանուած ճամբով մեր առանձնական թեմերուն մէջ պիտի հրատարակենք :

Հիմայ որ իրարմէ կը բաժնուինք ու երկայնժամանակեան բացակայութենէն ետքը՝ (որն որ աս անգամ ան մեծահռչակ Պենտեկոստէից ու Մարմնոյ եւ Արեան տօներուն օրերը ձեր մէջը գտնուելնուս արգելք ըլլալուն համար՝ մեզի կրկնապատիկ ծանր եղաւ) նորէն ձեզի պիտի դառնանք, հարկ կը համարինք, սիրելիք, ինչպէս մեր հաւատարիմ Քահանայ գործակիցներուն՝ նոյնպէս ձեզի ալ խրատական, կրթական ու մխիթարական խօսք մը ուղղել : Եւ որովհետեւ ձեր Հովուապետին առանձինն ձեզի խօսած ատենը՝ իր խօսքերը միշտ յօժարութեամբ մտիկ կ'ընէք, անոր համար աս անգամ աւելի եւս կը սպասենք ան ունկնդրութեան՝ երբ որ մեր խօսքերը 35 եպիսկոպոսակիցներուն ձայներովը զօրացած ձեր՝ ականջին ու սրտին կը հնչեն :

Սիրելիք, աղէտալի ժամանակ է հիմակուան աշխարհքիս ժամանակը, եւ աւելի տխուր ու զարհուրելի կ'երեւայ ապագան : Աշխարհքիս վիճակին գրքէն նոր կնիք մը բացուած ու Աստուծոյ բարկութեան նոր բաժակ մը երկրիս վրայ թափուած ու սփռուած կ'երեւայ : Ուր որ մարդ աչուրները կը դարձնէ՝ միշտ թշուառութեան ու կորստեան պատկերներ կը տեսնէ : Յայանի պատերազմ, վտարանջութիւն, ապստամբութիւն, անմիաբանութիւն, ատելութիւն ու ժողովուրդ ժողովրդեան դէմ ելլել, եւ դաշտերու վրայ եղած պատերազմներէն աւելի մեծ հակառակութիւն, կռիւ ու պատերազմ հողիներու մէջ : Վասն զի շատ մարդիկներու՝ ճշմարտութեան ու ծանօթութեան ա-

րեգալին աներեւոյթ եղած է, եւ սոսկալի մութին մէջ՝
 զորն որ իրենք իբրեւ լոյս կը հռչակեն, խաւարին ոգի-
 ները աւելի եւս կը տիրեն ու մեծ բռնութիւն կը
 բանեցնեն ասոնց վրայ՝ քան թէ անհաւատից որդ-
 ւոցը վրայ: (Եփես. Բ. 2:) Անօրէնութեան խորհուր-
 դը՝ որն որ ի սկզբանէ ի վեր երբեք չի հանգչիր, հիմակ
 ամէն ժամանակուրնէ աւելի զօրացած է: (Բ. Թեսաղ.
 Բ. 7:) Ա՛լ ասկէ ետքը պարզ մարմնասիրութենէ
 պատճառած աստուածամուացութիւն ու թանձր ան-
 աստուածութիւն չէ՝ որն որ ամէն ժամանակ աշ-
 խարհքիս վրայ տիրեց, հապա գիտութեամբ աս-
 տուածատեցութիւն եւ յայանի պատերազմ ու կռիւ
 Ատուծոյ ու Անոր Օծելոյն դէմ, աս է խռովարար
 ոգիներուն եւ հիմակուան սուտ մարգարէներուն բեր-
 նին խօսքը: Թէպէտ եւ սատանաները՝ ինչպէս Առա-
 քեալը կ'ըսէ, Ատուծոյ կը հաւատան ու Անոր առ-
 ջեւը կը դողան ու կը սարսին (Յակոբ. Բ. 19.), վասն
 զի ահուանին կրճատելով չեն կրնար զերծանիլ Անոր
 տէրութենէն՝ որն որ ամէն տեղ ներկայ է, ի վերայ
 այսր ամենայնի աս մոլորեցուցիչները սատանայէն ա-
 ւելի չարանալով կը հրատարակեն որ Ատուծոյ ու
 Անոր արքայութեանը հաւտալը՝ ամենայն չարեաց
 աղբիւր ու երկրաւոր յառաջագիմութեան արգելք
 է, եւ ջանալու է որ բոլորովին ջնջուի: «Արօնը, այս-
 պէս կ'ազազակէ հրապարակական գրուածներու մէջ
 նորերս հրատարակուած յայտարարութիւն մը, Արօնը
 որն որ բնկերութեան մէջէն պէտք է մերժուիլ, մար-
 դուն մարէն աներեւոյթ բլլալու է: Յեղափոխութիւնն
 է՝ որ գլխաւորաբար Արօնը կ'օչընչացրնէ, որովհետեւ
 յեղափոխութիւնը աս աշխարհքիս վրայ ամէն տեսակ
 ազատութիւն ու յաջողութիւն տալով՝ Երկնից յու-
 սալը աւելորդ կ'ընէ: Ուստի մենք անոր համար զանա-
 զան կրօնական կռիւներուն ու ջանքերուն եւ հասարա-
 կութիւններ շինուելուն հոգ կը տանինք, որովհետեւ

կրօնական ազատութիւն ըսելով՝ ամէն տեսակ կրօնէն ազատ ըլլալը կ'իմանանք: Մենք հաւատոյ ազատութիւն չենք ուզեր՝ անհաւատութեան հարկաւորութիւն կ'ուզենք»:

Ստուգիւ ձեր եպիսկոպոսներուն շատ դժուարին բան է, սիրելիք, Աստուծոյ դէմ ասանկ յանդուգն թշնամական խօսքերը յառաջ բերելով՝ որոնք երբեք պատմութեան մէջ դեռ չեն լսուած, ձեր բարեպաշտ ականջները տանջել: Բայց հիմակուան ատենս հարկաւոր է՝ որ անօրէնութեան անդունդը՝ որմէ որ ամէն շարիք դուրս կ'ելեն, յայտնենք. այսպէս կ'ընէ շատ տեղեր նաեւ Սուրբ Գիորջն ալ, վասն զի թոյնին թոյն ըլլալը ճանչցուելուն պէս՝ մնասակար ըլլալն ալ կը դադրի: Մտածեցէք մէյ մը աւելի մօտուստ վերը յիշուած ամպարիշտ վարդապետութեան վրայ, եւ անմիջապէս դիւրաւ կը տեսնէք որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ ան կարծատես անմրտին հին մարմնական իմաստութիւնը՝ զորն որ Քրիստոս Տէրն մեր աւետարանական առակներուն մէջ իբրեւ ազդարարութիւն մը յառաջ բերաւ, (Ղուկ. ԺԲ. 16.) որն որ իր երկրաւոր ստացուածոցը վրայ կատարեալ հաճութիւն ունենալով՝ իր անձին ասանկ կը խօսէր՝ Ա՜նչն, ունիս Բաղոս՝ Բարո-նիւնս հո՞րեալ ամաց Բաղոս, հանգի՛ր, է՛ր, ա՛րք եւ ուրախ լի՛ր: Բայց Աստուած անոր ըսաւ. Ա՜նօր, յայսմ գիշերի զոգիդ է Էն է Բաց պահանջեցեն, իսկ զոր պարտաստեցերն ո՞ւմ լինեցի: Ստուգիւ ասիկայ հին ատենուան անմտութիւն է, բայց հիմակուան նոր բարակցած շարութիւնը յայնմ կը կայանայ՝ որ չէ թէ միայն մէկ քանի մարդիկ, հապա բոլոր մարդկային ազգը կ'ուզէ լսուլ ընել Աստուծոյ ան զարթուցիչ ու փրկարար խօսքին՝ թէ Ա՜նօր, յայսմ գիշերի զոգիդ է Էն է Բաց պահանջեցեն:

Բայց ենթադրելով որ աս ժողովրդեան խաբեբայ երջանկարարները՝ ամենուն հանգիստ վիճակը

կորսընցընելով՝ հրով ու սրով, արիւնալից ապստամբութեամբ ու անողորմ քաղաքային պատերազմով, յափշտակութեամբ ու սպանութեամբ (վասն զի ասոնք են իրենց միջոցները) կարող ըլլան իրօք ամէն մարդու համար ասանկ երազեալ երջանկութիւն մը գաննել, Աստուծոյ, յաւիտենականութեան, մահուան ու հատուցման հաւատալը աշխարհքիս վրայէն վերցընել, Աստուծոյ Եկեղեցին սընչացընել, եւ բոլոր երկիրս անասնացեալ մարդոց ախու մը դարձընել, ասով ան խօսքը՝ Ա՛նօր, յայտ՝ Գիշերի շոգեդ է Կէն է Բայց պահանջիցն ճշմարիտ եղած չըլլար, մահը իր անողութիւն իշխանութիւնը թո՛ղ կու տայ, Աստուած իր ամենակարողութիւնն ու արդարութիւնը, դժոխքն իր պատիժները եւ երկինք իր վարձատրութիւնը՝ ալ իրենց հաւատացող ու իրենց վրայ մտածող չըլլալուն համար՝ կը դադրեցընեն։ Արդեօք չքաւորութիւնն ու մահը՝ մեղաց թոշակ չեն ըլլար, հիւանդութիւնը, տառապանքը, թշուառութիւնն ու յուսահատութիւնը՝ մեղաւորաց ժառանգութիւնն ըլլալէն կը դադրի՞ն։ Ոչ երբեք. ինչպէս որ արեգակը երկնքին վրայ երեւալէն չէր դադրեր՝ եթէ մարդիկ անմտութեամբ ու յիմարութեամբ մը մտքերնին դնէին աշուրնին վարել հաննել, որպէս զի մէյ մ՝ ալ արեւը չտեսնեն։

Հիմակաւն ժամանակիս սուտ մարդարէներուն ունեցած նպատակը իր ամպարիշտ մերկութեամբ բաւական յայտնի ցուցրցինք, որպէս զի որոնց միտքն որ դեռ ապականուած չէ նէ՛ զգուելով ետ կենան։ Բայց մարդութիւնը ամէն տեղ յայտնի համարձակ իր վարդապետութեամբը չ'երեւար, հապա երբեմն խաբեբայ եղանակաւ մը ազնուական ու մարդուս օգտակար դիտումներու սուտ կերպարանքով ինք զինքը կը ծածկէ, անանկ ձայներ կը հանէ՛ որ ամէն մարդուս սրտին մէջ արձագանգնին կը գաննեն, եւ

այսպէսով բոլոր ժողովուրդը կը խաբէ ու կը կուրացնէ: Անոր համար, սիրելիք, ձեր եպիսկոպոսները իրենց պարտք կը համարին առ տեսակ վտանգաւոր հրապոյրները՝ զորոնք հիմակուան ատենս աշխարհքիս քրիստոնէական կարգին կանոնին թշնամի եղողները շարունակ ի գործ կը դնեն՝ քիչ մ'ալ աւելի ի մերձուստ նշանակել եւ զձեզ յորդորել որ զգուշանաք:

Աս տեսակ յափշտակիչ հրապոյրներէն մէկն է Աշխարհահիւնը: Աստուած՝ ինչպէս որ Առաքեալը կը սորվեցընէ, (Գործք Առաք. ԺԷ. 26.) մէկ մարդէ մը բոլոր մարդկան ազգը յառաջ բերաւ, որպէս զի բոլոր երկրիս վրայ բնակի, ու անոր բնակութեանը որոշուած ժամանակ ու սահման դրաւ, ուրեմն մարդիկներուն տեսակ տեսակ ընտանիքներու, ցեղերու եւ ժողովուրդներու բաժնուիլը՝ Աստուծոյ գործքն է: Բայց լեզուաց զանազանութիւնը՝ մեղաց, մարդկային ազգին Աստուծմէ հեռանալուն ու մէկզմէկու մէջ եղած երկպառակութեան հետեւութիւնն է: (Ծն. ԺԱ:) Կրկնաթ հեթանոսները՝ որովհետեւ չէին ճանչնար որ ամէն մարդ մի եւ նոյն սկիզբէ յառաջ եկած է ու ամէնն ալ հաւատարապէս Աստուծոյ կը նմունին, անոր համար օտար ժողովուրդները իբրեւ բարբարոս կը սեպէին ու կ'արհամարհէին կամ պատերազմաւ կը նուաճէին ու միշտ իրենց բերնին խօսքն տալիս էր՝ Խնայել է հպարտիս եւ զհպարտս նուաճել (Parcere subjectis et debellare superbos): Իսկ բիւր հեթանոսները նաեւ հիմայ ալ ամէն օտարականները մահուան չափ թշնամի կը համարին, իրենց պզտիկ ցեղը միայն կը ճանչնան, ուրիշ ամէն ցեղերն ալ կը ջնջեն, օտարականը կը սպաննեն, կը խորվեն, կ'ուտեն կը լափեն եւ կամ անասնոյ մը պէս կը ծախեն. եւ նոյն իսկ իրենք ալ մինչեւ անասնական աստիճան կործանուած իջած են: Մի միայն քրիստոնէութիւնն եղաւ՝ որ մարդկութեան ճշմարիտ պատիւը նորէն

Հաստատեց: Քրիստոնէութեան առջեւը ամէն մարդ
 աստուածային զարմէ է, ամէնն ալ Աստուծոյ որդիներն
 են ու Արքայութիւն կոչուած են, ամէնն ալ արենա-
 կից են կրկին մտօք, թէ մէկ արիւնէ ծագելնուն Հա-
 մար, եւ թէ մի եւ նոյն արեամբ փրկուելնուն Համար,
 որն որ խաչին վրայ թափուեցաւ, ինչու որ Քրիստոսի
 Յիսուսի ձեռքովը հեռաւորները մերձաւոր եղան
 (Եփես. Բ. 13.), եւ զանազան ազգաց միջնորմը (մէկ-
 զմէկէ բաժնող պատը) քակուեցաւ ու կործանուեցաւ,
 թշնամութիւնը ջնջուեցաւ, ամէնն ալ մէկ Գլխու տակ
 մէկ մարմին կազմուեցան ու ամէնն ալ մէկ Հոգւով կը
 մերձենան առ Հայր. ասկէ ետքը ալ ո՛չ Հրեայ կայ, ո՛չ
 հեթանոս, ո՛չ խուժ, դուժ, եւ ո՛չ սկիւթացի, ո՛չ ծա-
 ուայ, ո՛չ ազատ, հապա ամէնն ալ ու ամէն բանի մէջ ալ
 Քրիստոս, ու կատարելութեան յօդն ալ՝ որն որ զա-
 նոնք իրարու հետ կը միացընէ, սէրն է: (Կողոս. Գ.
 11, 14:) Ուրեմն քրիստոնէութիւնն ու անոր հետ
 մէկտեղ ճշմարիտ մարդկութիւնը չի կրնար հաւանիլ
 որ ազգայնութեան ինչպէս նաեւ ընտանեաց զգաց-
 մունքը զօրանայ, բայց եթէ այնչափ միայն՝ որչափ որ
 աստուածսիրութեան ու եղբայրսիրութեան յառա-
 ջացմանը համար կը պահանջուի: Ասուգիւ քրիստո-
 նեան աւելի իր ընտանեացը մերձաւոր է քան թէ հա-
 սարակութեան, իր ազգին ու իր հայրենիքին աւելի
 մերձաւոր՝ քան թէ բոլոր մարդկութեան, ամենուն
 ալ ունեցած պարտքը կը կատարէ եւ Աստուծոյ հրա-
 մանին համաձայն՝ ամենայնի ամենայն կ'ըլլայ, երբ
 որ իր սէրը իր անձէն դուրս ելլելով՝ միշտ կամաց կա-
 մաց տարածուի աւելի ընդարձակ շրջանակներու, ու
 ըոնք են՝ ընտանիք, հասարակութիւն, ազգայնու-
 թիւն, տէրութեան քաղաքացիներն ու բոլոր մարդ-
 կային ազգը: Բայց սէրը անարգ անձնասիրութիւն
 կ'ըլլայ, եթէ որ՝ փոխանակ իր անձէն դուրս ելլելու՝
 իր անձին մէջ կենդրոնանալով՝ ամէն բան միայն իր

շահուն դարձրնէ: Ան ատենը առանձնականաց՝ մէջ, միանգամայն ընտանեաց, հասարակութեան, ցեղերու եւ ժողովրդոց մէջ ատելութիւնը կը բորբոքի, ու ամէն ազնուական կապը սրբապղծութեամբ կը քակուի: Եւ այնպէս հիմակուան ժամանակիս ամապարիշտ մոլորեցուցիչներուն ձեռքովը՝ որոնց միտքը թէ աստուածային եւ թէ մարդկային կարգն ու կանոնը տակնուվրայ ընել է, այլեւայլ ազգերուն՝ իրենց պատմութեանը, իրենց լեզուին ու իրենց հայրենի սովորութեանցը վրայ ունեցած առողջ սէրը՝ հնարքով մը անանկ խելագար հիւանդութեան մը կը փոխէ, որն որ ամէն այլալեզու դրացին իր ոխերիմ՝ թշնամին համարելով՝ իր սեպհական տունը կրակի կու տայ, որպէս զի դրացւոյն տունն աւրէ ու կործանէ: Ասիկայ ոչ երբեք յառաջացում է ինչպէս որ իրենք կ'անուանեն, ասիկայ՝ բուն ազնուական քրիստոնէական քաղաքականութենէն լայն արժանի եղանակաւ մը ետ ետ երթալով՝ հեթանոսութեան խաւարային բարբարոսութեան մերձենալ է. ասոնց ձեռքովը ազգայնութիւնը՝ Իսրայելացւոց ոսկեղէն հորթին կը դառնայ, որուն պաշտօնն ու երկրպագութիւնը՝ անսանձ կրից եռանդովը սաստկանալով՝ շատ անգամ այլեւայլ ցեղերը դաղանական պատերազմի մը կը դրդուէ, որն որ մարդկութեան ամօթ եւ Աստուծոյ առջեւը դարշելի է:

Չեր եպիսկոպոսները մէկտեղ ժողովուած ու սուրբ միաբանութեամբ մէկզմէկու հետ կապուած՝ թէպէտեւ իրենք ալ զատ զատ ցեղերու կը վերաբերին եւ զանազան լեզուաւ ձեղի կը խօսին, կ'աղաչեն ու կը խրատեն զձեզ ի Հոգի սուրբ ան ձայնով՝ որն որ Պենտեկոստէից առջի օրը ամէն լեզուաւ լսուեցաւ. Չրլայ թէ խաբուիք ան՝ ժողովրդեան մոլորեցուցիչներուն խորամանկ խօսքերովն ու արուեստներովը: Սերեցէ՛ յեր ազգը, յեր հայրենի՛ն ու յեր լեզուն, բայց մի մոռնաք որ բոլոր երկիրս Աստուծոյ է,

եւ թէ ամէն օր ամէն լեզուաւ Աստուծոյ աս աղօթքը կ'ըլլայ՝ Հայր Տեր, Լոյս Տեղ զարարիս Տեր, որպէս եւ Տէր Լոյսմտ Տերոց պարբարանաց, եւ թէ իր սուրբ կամքն ան չէ՛ որ օրէնքով ու քաղաքային կարգաւորութիւններով մարդիկներն ու ազգերը իրարմէ բաժնուին, հապա նաեւ արտաքուստ ալ անանկ կապուին՝ ինչպէս որ Եկեղեցւոյ ձեռքովը հաւատքով եւ սիրով իրարու հետ ներքուստ ու հոգեպէս կապուած պիտի ըլլան :

Մտորեցուցիչներուն ուրիշ մէկ խօսքն ալ՝ որն որ նոյն իսկ քանի մը ուղղամիտ ու ճշմարիտ յառաջացման ետեւէն եղողները կը խաբէ, բայց տակը քրիստոնէութեան դէմ թշնամութիւն ու ամէն բան տակն ու վրայ ընելու դիտաւորութիւն նենգութեամբ մը ծածկուած է՝ աս խօսքն է որն որ յաճախ կ'աղաղակեն թէ դասատուներ պէտք է Եկեղեցիէն բաժնուի :

Թո՛յլ որո՛ւ մանկաբոյր եւ մի արժեւորտ զբոսա Գաւառիս, զի այդպիսեացոյր է արտայումն երկնից (Մատթ. ԺԹ. 14.) ըսաւ Քրիստոս մեր Փրկիչը, որ ինքն ալ տղայութեան ատեն իր ներկայութեամբը Տաճարին դասատուներ սուրբ ըրած էր : Աս խօսքին ու աս օրինակին վրայ հիմնած՝ նաեւ Եկեղեցին ալ Աստուծոյ տան քովը իբրեւ նախագաւիթ մը դասատուն շինեց, որպէս զի պզտիկ տղաք՝ որոնք մկրտուելով Փրկչին կը վերաբերին, դասատան ձեռքովն ալ Փրկչին բերուին : Եւ Եկեղեցին երկրաւոր կենաց օգտակար եղած բաները սորվեցընելէն զատ՝ Աստուծոյ երկիւղին ու յաւիտենական կենաց ուսումն ալ մէկտեղ կը միացընէ, ինչպէս որ հոգին ալ մարմնոյն հետ միացած է : Հիմայ աս մտորեցուցիչները կ'ուզեն որ մարմինն ու հոգին, երկիրն ու երկինք, դասատունն ու Եկեղեցին, մանուկներն ու Քրիստոս իրարմէ բռնի բաժնեն : Ալ ասիկէ ետքը Լոյս զենո՞ր որ մանուկներն Անոր երևան, կ'արժեւեն : Քրիստոսի անանկ սրտաշարժ խօս-

քին՝ իրենց տուած պատասխանն աս է: Դուք ձեզմէ կշռեցէք, սիրելիք, թէ որ ձայնին ետեւէն պետք են երթալ ձեր եպիսկոպոսները, երբոր չեն ուզեր որ իրենց հոգւոյն վրայ բեռնաւորուի դատապարտութեան երկանաքարը, ինչպէս Քրիստոս կը սպառնայ անոնց՝ որոնք որ պզտիկ տղաքը անկից կը խոտորեցընեն: (Մատթ. ԺԸ. 6:)

Ոմանք դարձեալ՝ Բայց Եկեղեցին գիրոս-իւտոն լինա-
 թի է կը պոռան: Ասոնց ասանկ պատասխան կու տանք: Ան գիտութիւնը՝ որն որ զԱստուած ու Աստուծոյ Յայտնութիւնը կ'ուրանայ ու կ'ատէ՝ Եկեղեցիէն յարգութիւն ու շնորհակալութիւն ընդունելու այնչափ միայն կրնայ իրաւունք ունենալ, որչափ որ սուտ ստակ շինող մը կրնայ իր գործքին համար դրամափորձին (այսրճիկն) շնորհակալութեանը սպասել, որովհետեւ Եկեղեցին ինք զինքը յայտնեալ ճշմարտութեան սիւն ու հաստատութիւն կը ճանչնայ: (Ա. Տիմ. Գ. 15:) Բայց բուն ճշմարիտ գիտութիւնը իսկզբանէ մինչեւ հիմայ Եկեղեցւոյ մէջ պատիւ գտած ու մշակուած է. եւ որովհետեւ Եկեղեցին ամենայն ճշմարտութեան մէկ սկզբնական աղբիւր մը միայն կը ճանչնայ եւ Յայտնութեան Աստուածը մտաւորական ու բնական աշխարհքին իբրեւ արարիչը կը դնէ, անոր համար կրնայ ապահովութեամբ մը գիտութեան ասանկ խօսիլ՝ «Դուն կը քննես բնութիւնն ու միտքն ու պատմութիւնը, վասն զի կը կարծես որ կենաց առեղծուածը հօն կը գտնես, ստուգիւ անոնք են որ Աստուծոյ վրայ վկայութիւն կու տան, միայն թէ ուղիղ քննէ ու խորունկ քննէ՝ անմիջապէս Անոր յաւիտենական զօրութիւնն ու աստուածութիւնը անոնց մէջ կը տեսնես (Հռոմ. Ա. 20.) ու յայտնեալ խօսքին եւ ստեղծուած գործքին մէջ եղած միաբանութիւնը կը ճանչնաս: Բայց ես չեմ կրնար ինծի յանձնուած սուրբ խօսքը՝ քու ամէն օր փոփոխուած

գիւտերուդ համաձայն ձեւել ու կերպաւորել. զնա՛, զնա՛ յառաջ ժրութեամբ ու զգօնութեամբ, կը սպասեմ ես քեզի ուրախութեամբ ի վախճանի՝ թէ որ պիտի հասնիս: Ես քու սահմանդ չեմ վրդովեր, դուն ալ իմն յարգէ, եւ մի պղտորեր ու մի արհամարհեր այնպիսի սուրբ աղբիւրը՝ որն որ միլիոնաւոր պանդուխտներ կը զովացընէ, որոնք առանց անոր կը նուաղէին, վասն զի դուն չես կրնար անոնց ծարաւն անցընել»:

Մորթութեան երբորդ ու ամենէն զօրաւոր հրապոյրն ալ Աշտոտիեան աղաղակն է: Ստուգիւ ազատութիւնը թէ որ ուղիղ մտօք իմանալու ըլլանք՝ ազնիւ բարիք մըն է, եւ Աստուծոյ Եկեղեցւոյն ալ ի սկզբանէ վեր շատ սիրելի: Արովհետեւ հազար ութը հարիւր տարւան մէջ իր հաստատութենէն մինչեւ հիմայ ո՞վ իրմէ աւելի ցաւ զգացած ու ճնշուած է անիրաւ բռնաւորական իշխանութեան տակ: Ամբողջ երեք դար՝ երբեմն Նեղոս գետին վրայ Մովսէսին պրտուեայ տապանակին պէս՝ իր որոցը կը ծփար արեան հեղեղի մը վրայ՝ որն որ զինքը կլէլու կը սպառնար: Բայց անիկա հաւատով լեցուած ըլլալով՝ Գրիստոսի Տեառն մերոյ Պիղատոսին ըսած ան խօսքը թէ Այն «նէր դո՛ւ իշխանութիւն ի վերայ ի՞՞ ես ոչ մի, ելե՛ ոչ էր դո՛ւ եւլ ինչ է վերոսոր, (Յովհ. ԺԹ. 11.) նաեւ իր՝ հեթանոսական տէրութեան տակ եղած ատենը ունեցած վիճակին ալ մերձեցուց, եւ անոր համար՝ վասն զի ինք Աստուծոյ սուրբ տիեզերական կառավարութեանը վրայ վստահացած ըլլալով՝ չէր նայեր որ բռնութեամբ ինք իր բաւունքն ստանայ. հապա իր ազատութեան եղանակն ու ժամանակը արդար ու ամենակարող Աստուծոյ կը յանձնէր, ուստի աս մտօք ալ իր վրայ կատարուեցաւ Գրիստոսի Տեառն մերոյ մէկալ խօսքն ալ թէ Մի երկնչի հօր փորձի (աննշան), զի հաճեցաւ Հայր յեր ուսլ յեւ շարտայութիւն: (Ղուկ. ԺԲ. 32:)

Աթուղիկէ եկեղեցւոյն ան հիմնական վարդապետութիւնը թէ քրիստոնեայք՝ Աստուծմէ իրենց վրայ դրուած իշխանութեան պէտք են հնազանդիլ՝ կը բխէ իր անդրդուելի հաւատքէն՝ զորն որ ունի Աստուծոյ ամենազօր ու իմաստուն տիեզերական կառավարութեանը վրայ։ Եկեղեցին Առաքելոց բերնէն ընդունած աս խօսքը կը պահէ ու կը քարոզէ թէ Հնազանդ լեռոստ ասեռոյն ճարդիկեղէն ասբեղծութեան վասն Տեառն. ելիե ինքաւորի՝ իբրեւ ասաւել ուսել, ելիե դասասորաց իբրեւ ի նմանէ ասաւելոց ի վրէժիմարութեան չարագործաց եւ ի գոլմալեան թարեգործացն. զի այսպէս են հաստ Աստուծոյ՝ թարեգործացն պատանջեցոցանել զանգամ ճարդոց զանգարութեան։ Իբրեւ զազարոս լինել եւ մի իբրեւ պատրասել չարութեան ունել զազարութեանն. (Ա. Պետր. Բ. 13—16.) եւ դարձեալ Ասեռայն անչն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ի հնազանդութեան հացոյց. քանզի ոչ ուսորեւ է իշխանութեան՝ ելիե ոչ յԱստուծոյ. եւ որ եմն՝ յԱստուծոյ կարգեալ են։ Այսասեռութեւ որ հաստասակ հաց իշխանութեանն՝ Աստուծոյ հրասանին հաստասակ հաց. եւ որք հաստասակն հան՝ անչանց դասասորանս ընդունին։ (Հռոմ. ԺԳ. 1—2.)

Ի՞նչ. ստոյգ է մի արդեօք ան նախատինքը՝ զորն որ քրիստոնեութեան երեսը կը զարնեն թէ միայն վատ ու կանացի անձինքներ կը կրթէ, որոնք իրենց կամքէն կողպտուած ըլլալով՝ բռնաւորական իշխանութեան ամէն տեսակ հաճոյիցը իրենք զիրենք կը յարմարընեն։ Ո՛չ երբեք։ Ո՛րչափ հազարաւոր մարտիրոսներ ունի Եկեղեցին մինչեւ հիմա ամէն երկրի մէջ, որոնց ամէն մէկը մէյմէկ աներկիւղ գիւցազն, պատերազմող ու նահատակ է ճշմարիտ ազատութեան համար՝ որն որ միայն Եկեղեցւոյ ծոցէն ծնաւ բոլոր աշխարհք։ Բայց Եկեղեցին իր ազատութեան գործողութիւնը ներքուստ կը սկսի, վասն զի գիտէ՝ որ մեղաց ծառայ եղողը՝ չիկրնար ճշմարտապէս ազատ

մարդ ըլլալ, եւ թէ միայն ներքուստ ազատը՝ զորն որ Քրիստոս ազատ ըրաւ, կրնայ ըստ արժանւոյն նաեւ արտաքին ազատութիւնն ալ գործածել անխափան ամէն բարիքն ընելով ու բոլոր քրիստոնէական ու քաղաքական պարտքերը քաջութեամբ եւ ուրախութեամբ կատարելով, չէ թէ չարո-խեան պարտաւ ընելով ազատութիւնը, ինչպէս որ Առաքեալը անանկ ճշդիւ կը նշանակէ՝ որ կարծես թէ հիմակուան ժամանակիս այնչափ ազատասիրաց անխիղճ ջանքերն աչքին առջեւն ունէր :

Սիրելիք, ձեր եպիսկոպոսները տեսնելով ասանաստուած ջանքերը, կռիւներն ու պատերազմները՝ որոնցմով աշխարհքիս բոլոր ազգերը՝ երեւակայական ազատութեան ու երկրաւոր յաջողութեան մը համար կը շարժին ու կը խռովին, այսպիսի մէկ ծանր ատեն մը դեռ իրենց սրտին մէջ ձեր վրայ ունեցած հոգը, վարդապետութիւնը, խրատն ու ազաչանքը՝ աս խօսքին մէջ կ'ամփոփեն զորն որ Քրիստոս Տէրն մեր ըսաւ՝ Գիտէ Հայրն յեր ին պիտոյ է յեղ այդ ամենայն : Բայց իրենց բեկտ նախ զարտայո-խեանն Աստուծոյ եւ զարդարո-խեանն նորա, եւ այդ ամենայն յաւելցի յեղ : (Մատթ. Զ. 32—33 :

Խնդրեցէք նախ Աստուծոյ արքայութիւնը : Կը դանէք արքայութիւնը իր Եկեղեցւոյն մէջ, անոր վարդապետութեանցն ու փրկագործ խորհրդոցը մէջ : Բայց միամիտ սրտիւ արքայութիւնը խնդրողները ո՞րչափ են, Որովհետեւ շատերը կան, ինչպէս վերը ըսինք, որ Աստուծոյ արքայութեանը դէմ թշնամութեամբ կը պատերազմին ու զանիկա ոչընչացընելու կը ջանան, կը դանուին նաեւ միլիոնաւոր քրիստոնէայք ալ՝ որոնք երբեք արքայութեան հոգ չեն տանիր եւ անտարբերութեամբ մը անոր կռնակին կը դարձնեն, եւ այսպիսիներուն՝ Աստուծոյ իմաստութիւնը իբրեւ արհամարհելի յիմարութիւն է : Ուրեմն ո՞վ կրնայ մեզի

երաշխաւոր ըլլալ որ Աստուած անգործ ու դատարկ
 չիթողուր ան ապերախտ ազարակը՝ որուն վրայ Աս-
 տուծոյ խօսքը հազիւ թէ մէկ պողաբեր տեղ մը դանկ
 որ փոխանակ գինւոյ ու ցորենի՝ փուշ եւ տատասկ
 բերէ. ո՞վ կրնայ երաշխաւոր ըլլալ՝ որ Աստուած չի-
 բառնար մեզմէ իր արքայութիւնը եւ չիտար ուրիշ հե-
 ուաւոր ազգի մը՝ որն որ անոր պտուղ բերէ. Բարձր
 է յէնչ արտայայտութիւնն Աստուծոյ, եւ րոյն ազգի՝ որ ա-
 նկէ շարժուող չորս (Մատթ. ԻԱ. 43:) Ասկից 1500
 տարի յառաջ Նիկիա առաջին տիեզերական ժողով-
 քին մէջ 300էն աւելի եպիսկոպոսներ ժողվուած էին,
 որոնց մեծ մասը արեւելքի կողմերէն եւ ամէն մէկը
 մէյմէկ ծաղկեալ թեմերու գլուխ էին: Իսկ այսօրուան
 օրս (նաեւ շատ դարերէ ի վեր) Ասիայի ու Ափրիկէի
 մէջ եղած ան Աստուծոյ ծաղկալից պարագաները՝ ան-
 հաւատներէ կոխկոտուած անապատներ դարձած են:
 Արդ՝ որպէս զի շղթայ թէ եկեղեցական պատմութիւնը
 ձեր հիմա մէկտեղ ժողվուած եպիսկոպոսներուն եւ
 անոնց թեմերուն վրայ մի եւ նոյն տրտունջն ընէ,
 խնդրեցէք ուրեմն, սիրելիք, ամէն բանէն յառաջ
 Աստուծոյ արքայութիւնը: Հիմա է որ ամէն ժամա-
 նակէն աւելի արքայութիւնը կը բռնադատի, եւ
 միայն բռունք՝ այսինքն հաստատամիտք անիկա կը
 յափշտակեն (Մատթ. ԺԱ. 12.) եւ թող չեն տար
 որ իրենց ձեռքէն պրծի ելլէ: Եւ ինչ բան որ առան-
 ձինն չէք կրնար ձեռք բերել, ջանացէք որ ուրիշ ձե-
 ղի համամիտ եղողներուն հետ սուրբ կապով մը կա-
 պուելով ան բանը գլուխ տանիք, որպէս զի ինչպէս որ
 չարերը իրարու հետ կը միաբանին յարձակելու եւ
 կործանելու համար. նոյնպէս բարիներն ալ՝ ճշմար-
 տութիւնը, իրաւունքն ու կարգը կանոնը պաշտպանե-
 լու եւ պահելու համար մէկգմէկու հետ միացեալ ըլլան:
 Խնդրեցէք Աստուծոյ արքայութիւնն ու անոր
 արդարութիւնը, դուք վերին իշխանք, դուք հրա-

մանատարք եւ դուք ժողովրդեան երեսփոխանք,
վասն զի Աստուած ժողովրդեան երկրաւոր բախտը
ձեր ձեռքը յանձնած է: Ամէն ատենէն աւելի հիմա
կարօտութիւն ունիք դուք Աստուծոյ զօրութեանն ու
իմաստութեանը, որպէս զի սանձն այնպէս կառավա-
րէք՝ որ կառքը խորտակուելով անդունդը չկործանի,
հապա ճշմարիտ ազատութեան ու ժողովրդոց երջան-
կութեան տանող ճամբուն վրայէն ապահովապէս յա-
ռաջ երթայ: Խնդրեցէ՛ք յԱստուծոյ զիմաստութեան՝ ե-
րայի յեղ: (Յակոբ. Ա. 5:)

Խնդրեցէք Աստուծոյ արքայութիւնն ու անոր
արդարութիւնը դուք ծնողք, տանտէրք, ուսուցիչք
եւ վերակացուք: Աստուծոյ արքայութեան ազարա-
կէն ամէն մէկերնուդ մէյ մէկ որոշեալ մաս մը յան-
ձնուած է ամէն մէկուն իր վիճակին ու պաշտօնին հա-
մաձայն, եւ բերած պտուղնին զլիսաւորաբար ձեզմէ
կախում ունի: Թէ որ բարի եւ ազնիւ պտուղներ են՝
ան ատենը նոյն իսկ Աստուած ձեր վարձքը կ'ըլլայ,
իսկ եթէ բերածնին կրակը նետելու խռիւ ու փուշ
ըլլան նէ, ան ատենը նոյն կրակը ամենէն յառաջ զձեզ
կ'այրէ:

Դուք մեծամեծք եւ մեծատունք, զձեզ ուրիշ-
ներէն աւելի սաստկապէս վիրաւորեց հիմակուան
ժամանակիս մրրկալից փոթորիկը: Իբրեւ Աստուծոյ
մէկ փրկարար պատիժը մտածեցէք բոլոր ձեր կրած-
ները եւ խոնարհեցուցէք զձեզ անոր ամենազօր ձե-
ռացը տակ: Որչափ մեծ ալ ըլլայ ձեր կրած վնասը՝
չատ աւելի մեծ կ'ըլլայ ըրած շահերնիդ, թէ որ ա-
նիկա ձեզի պատճառ ըլլայ անպաճոյճ բարք մը, աշ-
խարհային բաներու համեստ ու չափաւոր բաղձանք,
սուրբ ուրախութիւն եւ խաղաղ սիրտ մը ստանալու
եւ Աստուծոյ ու անոր Եկեղեցւոյն դաւանալու: Ան
ատեն դուք ալ կարեկցութեամբ մը կը լսէք կարօ-
տելոց ու քաղցելոց ձայնը՝ որն որ հիմա շատերուն

իբրեւ պատերազմի աշաղակ մը դող ու սոսկումն կը բերէ, եւ ան ատենը եղբայրսիրութիւնը մտքերնիդ կը սրէ որ նաեւ պզտիկ պզտիկ միջոցներով՝ բայց միացեալ զօրութեամբք իբրեւ Աստուծոյ հաւատարիմ տնտեսները անոր գործակիցներն ըլլաք օրըստօրական հացը խնդրող աղքատին աղաչանքը կատարելու: Խընդրեցէք Աստուծոյ արքայութիւնն ու անոր արդարութիւնը, իսկ մնացածները, ինչպէս նաեւ ուրիշներուն բաշխելու համար ձեզի հարկաւոր եղած բաները՝ ձեզի կ'աւելցուին ու կը արուին:

Վսեք գեղերու քաջ բնակիչք, որ կը մշակէք ան կոշտ երկիրը՝ որն որ արդէն ձեր հայրերը սնուցած է, նաեւ ձեզի համար ալ հաւատարիմ խօսք մը պահած են սրտերնուն մէջ ձեր եպիսկոպոսները, ձեզի համար՝ որ ժողովրդեան ու երկրին զօրագոյն եւ ազնուագոյն մասը ամենէն աւելի կը կազմէք: Մինչեւ հիմա ձեր երկիրներուն մէջ քաշուած ու զբաղած ըլլալովսիդ՝ ձեր մեծ մասը ազատ ու անարատ պահուեցաւ հիմակուան ժամանակիս մոլորութիւններէն՝ որոնք իրենց վառարանը քաղաքներու մէջ դրած են: Բայց հիմա աս փորձիչներուն ձայնը շատ եղանակաւ ձեր մէջն ալ կը մտնէ թէ խօսքով թէ գրուածքով, եւ ձեր հոգւոյն ազարակին վրայ որոման սերմը կը ցանէ: Զգուշացէք պահեցէք աս ազարակը, եւ նորելուկ անհաւատ վարդապետութեան յիմարական վարսակին տեղ՝ մի՛ տաք ան հին կաթուղիկէ հացին ցորենը՝ որն որ թէ հանգստեան եւ թէ վշտաց մէջ ձեր հայրերը կերակրեց ի կեանս յաւիտենականս: Այսիլեցէք շնորհակալութեամբ ու գոհ սրտով ան օգուտներն ու ազատութիւնները՝ զորոնք սահմանադրութիւնը ձեզի շնորհեց. բայց մի թաղէք ձեր սիրտը մէկ քանի ծանրութիւններէն հիմա ազատուած ազարակներնուդ մէջ, ապա թէ ոչ՝ վերջէն աստուածային Ազարակին մէջ հանգիստ մը չեզբա-

ներ : Խնդրեցէք դուք ալ ամէն բանէն յառաջ Աստուծոյ արքայութիւնն ու անոր արդարութիւնը, եւ ուրիշ բաները ձեզի կ'աւելցուին :

Դ՛ուք աղքատք, դ՛ուք որ օրուան աշխատութեամբ ձեր ապրուստը կը գտնէք եւ ուրիշ սերմանելու արտ մը չունիք՝ բայց եթէ ձեռքերնուդ կոշտերը՝ զորոնք ձեր քրտինքը կ'ուռուցանէ, գլխաւորաբար ձեզի ուղղուած են մոլորեցուցչաց ձայները, վասն զի անոնք ձեր ջղոտ բազուկներուն կարօտութիւն ունին . Ինչպէս կրնային ձեր եպիսկոպոսները զձեզ մոռնալ . երանի՜ թէ մեր խօսքերը ձեր սրտին մէջ բարի տեղ մը գտնէին : Ստուգիւ ձեր եպիսկոպոսները չեն խոստանար ձեզի երկինքը աս աշխարհքիս վրայ ան մտքով՝ որ մտքով մոլորեցուցիչները կը խոստանան, վասն զի անոնք՝ թէ որ դուք իրենց խօսքերուն ականջ կախելու ըլլաք, ուրիշ բան չեն ըներ՝ բայց միայն կրից, նախանձու, ատելութեան, յափշտակութեան ու մարդասպանութեան դժոխքը ձեր սրտին մէջ բորբոքել, եւ մէկ քանի օրուան դիւնովութենէն ետքը՝ զձեզ յառաջուրնէ աւելի աղքատ, դժբախտ ու անմխիթար թողուլ : Բայց իրօք կայ երկրիս վրայ երկինք մը, զորն որ իրեն հետ մէկտեղ վար բերաւ անիկա՝ որն որ ախօռի մը մէջ ծնաւ ու աղքատ հիւսան մը խանութին մէջ մեծցաւ, եւ՝ (որ ձեր մէջը երբեք չկայ) իր գլուխը գնելու ալ տեղ մը չունէր, անիկա՝ որ երկնի եւ երկրի Տէր է : — Ամենէն յառաջ աղքատաց եւ ճնշելոց, վշտացելոց եւ լացողաց, քաղցելոց եւ ծարաւելոց խոստացաւ Աստուած իր երկնից արքայութիւնը : Աս երկնից արքայութիւնը միայն անդիի աշխարհքը՝ ամպերու վրայ չէ, ուր որ երկրաւոր կարօտութիւն երբեք չկիրնար հասնիլ : Արքայութիւնը նոյն իսկ ձեր մէջն է, հոն՝ ուր որ նաեւ բորբոքեալ դժոխքը կայ, հոն կը գտնէք անիկա՝ ուր որ մաքուր խղճմտանք, հան-

դարտ աստուածային վստահութիւն, սրտի խաղաղութիւն, սակաւապէտ գործունէութիւն, քրիստոնէական համբերութիւն եւ յոյս, ու որդիական հաւատք մը՝ որ հաւտայ Աստուծոյ տեսչութեանն ու օգնութեանը, որն որ նաեւ հիմակ ալ դրան առջեւը կը կենայ եւ զարմանալի եղանակաւ մը միշտ կը փրկէ զանիկա՝ որն որ ցաւոց խաւարային սենեկին մէջէն ճշմարիտ հաւատքով անոր հառաչանք մ'ընէ: — Բայց թող տուէք որ Աստուած դատէ ու պատժէ այնպիսիները՝ որոնք իրենց ձեռուրներն ու սիրտը առանց սիրոյ ձեր կարօտութեանցը կը փակեն, վասն զի անիկա արդէն յառաջագոյն ծանոցց թէ ինչպէս մէկ օր մը ձեր տեղն անցնելով ձախ կողմը կեցողները պիտի դատէ: (Մատթ. ԻԵ. 41—46:) Իսկ եթէ դուք անձամբ ժամանակէն յառաջ կ'ուզէք բռնութեամբ ձեր իրաւունքը տեղը բերել ու բռնական գործքերով եւ արիւնհեղութեամբ զձեզ կ'արատաւորէք, ան ատեն Աստուած ձեզի թեր չ'ելեր՝ հապա դէմ կ'ելլէ. ձեր ունեցած զրկման ու համբերութեան համար ձեզի տրուելու յաւիտենական վարձքը կը կորսնցընէք, ու երկնքի տեղ՝ աս աշխարհքիս մէջէն կը սկսիք դժոխքը ձեզի հետ մէկտեղ շարութեամբ արատաւորուած խղճմտանքներնուդ մէջ կրել: Ուրեմն խնդրեցէք ամէն բանէն յառաջ Աստուծոյ արքայութիւնն ու անոր արդարութիւնը, իսկ ուրիշ ձեզի հարկաւոր եղածները — ճշմարտախօս Աստուածը ասիկա կը զրուցէ — ձեզի կ'աւելցուին:

Դ՛նէք քաջ պատերազմողք, դ՛նէք որ այսպիսի խռովայոյզ ու ամբոխալից ատեն մը՝ օրինաց ու կարգաւորութեան երկաթի կանոնը հզօր ձեռամբ գործածեցիք, դ՛նէք ալ եպիսկոպոսաց բերնէն խօսք մը լսեցէք, չէ թէ ան խօսքը միայն՝ զորն որ արդէն Յովհաննէս ասկից 1800 տարի յառաջ ձեր զինուո-

րակիցներուն ըսաւ, [Թէ Մի զո՛ր խոսիցէ՛ր եւ մի զո՛ր շրջաբարիցէ՛ր, շատ լիցին յեղ Բողակին յեր. (Ղուկ. Գ. 14.)

Հապա հիմակուան ժամանակիս յարմար ուրիշ խօսք մ'ալ: Նայեցէք որ մէկէ մը չմոլորիք, հաւատարիմ կեցէք ձեր դրօշին երգմանը, վասն զի ան երգումը ամենակարող Աստուծոյ ըրիք: Բոլոր աշխարհք գիտէ որ դուք քաջ էք, եւ անոր համար ալ շնորհակալ կ'ըլլան ձեզի ամէնքը՝ որոնք օրինաց, իրաւանց ու կարգի կանոնի սրբութիւնը կը ճանչնան: Բայց մեզի եպիսկոպոսացս ձեր անմահ հոգիները յանշափս աւելի սիրելի են՝ քան [Թէ ձեր հզօր բազուկները: Ուստի որովհետեւ հիմակուան ատենս մահն ամէն ժամ ձեզի մերձ է, անոր համար մտածեցէք յաւիտենականութեան, Աստուծոյ եւ անոր արքայութեանը վրայ: Խղճմտանքնիդ ձեր զէնքերուն պէս յստակ ու ջինջ պահեցէք, որպէս զի երբ որ [Թշնամեաց գնտակը ձեր քաջ սիրտը ծակելու ըլլայ՝ անմիջապէս մաքուր դիւցազնական հոգիներնուդ առջեւը երկինքը բանայ:

Գո՛ւք ո՛ սիրելի քրիստոնեայ մարք, ձեզի ալ առանձինն խօսք մը ունինք: Ձեր ծոցին վրայ կը հանգչի ապագային յոյսը: Գո՛ւք՝ որ ձեր ստեանց կաթովը մարդկային ազգի մատաղ զաւկրները կը սնուցանէք, արբուցէք անոնց նաեւ ձեր բարեպաշտ հաւատացեալ սրտէն բխած քրիստոնէութեան կաթնալ: Ինչ բան որ դուք Աստուծոյ եւ անոր արքայութեանը վրայ անոնց մատաղ հոգիներուն մէջ կը տպաւորէք, անիկա հոն խորունկ արմատ կը ձգէ. եւ [Թէպէտ վերջէն շատ ուշ նաեւ աշխարհքիս տիղմն ալ անոնց վրան գալու կպչելու ըլլայ՝ ի վերայ այսր ամենայնի յարմար ժամանակին անոնք նորէն կը ծլին ու կը դալարանան եւ փրկաւէտ պտուղներ կը բերեն: Օրինակ ու մխիթարութիւն ըլլայ

ձեզի ամենատուրք Մայրն Աստուծոյ, որն որ միանգամայն Եկեղեցւոյ ալ Մայր է:

Մեր հոգեւոր գործակիցներուն՝ այս ինքն քահանայից՝ արդէն մէկ առանձինն երկայն բարակ խօսակցութիւն մը ուղղած ենք, ուստի այսօր որ հանգիստաւոր պատարագով մը մեր ժողովքը վերջացուցինք եւ հիմա մէկզմէկէ պիտ'որ բաժնուինք՝ ուրիշ բան չիմնար՝ բայց եթէ հրապարակաւ ու բոլոր մեր հաւատացեալ թեմերուն առջեւը՝ որոնք կայսերական տէրութեան մէջ Էլպայէն մինչեւ Ադրիական ծով, Տնեսդէր գետէն մինչեւ Ռենոս իրարմէ հեռու սահմաններու մէջ տարածուած կը բնակին, միանգամ մ'ալ նորոգել ան կաթուղիկէ սիրոյ, միաբանութեան եւ հաւատարմութեան դաշինքը՝ զորն որ մենք մեր միաբան գալովն ու ժողվուելովը հաստատեցինք, եւ դարձեալ նորոգել մեր եպիսկոպոսական որոշումը՝ որ ըրինք Աստուծոյ եւ անոր արքայութեան ու անոր հաւատացեալ ժողովրդեանը համար գործելու, աղօթելու, ապրելու եւ մեռնելու Աստուծոյ սուրբ կամայը համաձայն: Չեր աղօթքն ու ձեր սիրելի վստահութիւնը՝ որուն համար միաբան ձեզի կ'աղաչենք, մեզի օգնական ըլլան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան: Ամէն:

Վիեննա, Յունիս 17, Երրորդ կիւրակէ յետ Պենտակոսակից, 1849:

Ասկից ետքը կու գան 35 եպիսկոպոսաց անունները, որոնց մէկը կարդինալ արքեպիսկոպոս է, վեցը արքեպիսկոպոս ու 28 եպիսկոպոս:

